

ԵՐԱԿՐԹՆԵԱ

ՄԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՄԱՅՐ ԱԹՈՒՍ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՇՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿԵԱՐԱԹԱԹԵՐԹ

Ծաղկազարդի տոնը Մայր Աթոռում

Մարտի 24-ին՝ Ծաղկազարդի տոնին, Մայր Աթոռ Սբ Էջմիածնում, առավոտյան ժամերգությունից հետո, հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գաբրեղի Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց անդաստանի արարողություն եւ մանուկների օրհնության կարգ:



Մայր տաճարում տոնի առիթով մատուցված սբ Պատարագի ավարտին Վեհափառ Հայրապետն օրհնեց Մայր Աթոռի «Էօնեկեան» հանրակրթական դպրոցի սաներին եւ արարողությանը մասնակից մանուկներին:

Իսկ արարողությունից հետո, ի հիշատակ Մանուկների օրհնության օրվա, նրանց բաշխեց փոքրիկ նվերներ:

Ուտնվայի արարողությունը Մայր Աթոռ Սբ Էջմիածնում



Մարտի 28-ին՝ Ավագ հինգշաբթի օրը, միաձնաեջ Մայր տաճարում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գաբրեղի Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիսապետեց Ուտնվայի արարողությունը:

Արարողության ընթացքում ընթերցվեցին Ս. Գրքից հատվածներ, Հովհաննես Պլուզ վարդապետի «Սիրո մասին» խրատը, որից հետո Նորին Սրբությունը խաչով ու Ավետարանով օրհնեց խորանի վրա դրված ջուրն ու յուղը:

Ապա, մեր Տեր Հիսուս Քրիստոսի օրհնակով, Ամենայն Հայոց Կաթողիկոսը ծուկնի եկավ եւ շարականների երգեցողության ներքո լվաց ու յուղով օծեց տասներկու անձանց ոտքերը: Նրանց թվում էին եպիսկոպոսներ, վարդապետներ, աբեղաներ, սարկավագներ, Գեւորգյան հոգեւոր ճեմարանի սաներ, Երեւանի պետական համալսարանի աստվածաբանության ֆակուլտետի ուսանողներ, Մայր Աթոռի «Էօնեկեան» հանրակրթական դպրոցի աշակերտներ, զինվորներ եւ Հայաստանում ապաստան գտած սիրիահայ մի մանուկ:

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱԲՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏՊԱՄԸ ՏԵՐ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

Սուրբ Էջմիածին, մարտի 31, 2013 թ.

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«**Ձ**ի կեանս յալիտեմականս ետ մեզ Աստուած, եւ այս եմ կեանքն, որ յՈրդին Նորա եմ»

(Ա Յովհ. Ե 11)

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ,
Բացվող զարնան ջերմության եւ նոր կյանքով լցվող բնության զարթոնքի հետ մեր հոգիներում այսօր «Քրիստոս յարեալ» հրեշտակածայն ավետիսով թեւածում են Հարության տոնի հույսն ու խնդությունը՝ նորոգելով ու զորացնելով մեզ վստահության մեջ, որ «Աստված հավիտեմական կյանք տվեց մեզ, եւ այդ այն կյանքն է, որ Նրա Որդու մեջ է»:

Առաքյալի այս խոսքը վկայում է մարդկության պատմության ընթացքը վերափոխած իրադարձության մասին, որը կատարվեց, երբ խաչված եւ գերեզմանում դրված Քրիստոսը հարություն առավ մահվանից: Այդ պահից մահն իշխանություն չունի մարդկանց վրա, մեղքը քակված է, մահվան թագավորությունը՝ խորտակված: Գերեզմանից այն կողմ փրկության ու հավիտեմական կյանքի լույսն է, որ պայծառորեն շողում է այսօր մեր հոգիներին՝ նորոգելով մեզ մեր հույսի ու հավատքի մեջ:

Քրիստոսի հարության հավատքը ուժ է զորություն է բերում՝ միշտ վեր հանելու եւ ապրելու այն կյանքը, որ Աստծո Որդու մեջ է: Այդ կյանքի հիմքը սերն է, նվիրաբերվող սերը, այն սերը, որով Աստծո Որդին աշխարհ եկավ, փրկչական Իր առաքելությունն իրականացրեց եւ պատգամեց Իր աշակերտներին ու հետեւորդներին՝ ասելով. «Նոր պատվիրան եմ տալիս ձեզ, որ սիրեք միմյանց» (Հովհ. ԺԳ-34): Մարդկային կյանքի հիմքում Քրիստոսը

Մարտի 31-ին Հայաստանյայց Առաքելական Սբ Եկեղեցին մեծ հանդիսավորությամբ տոնեց Տեր Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարության տոնը: Տոնի առիթով Մայր Աթոռ Սբ Էջմիածնում Պատարագ մատուցեց Ն. Ս. Օ. Տ. Տ. Գաբրեղի Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Հայրապետական Պատարագին ներկա էին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը, ՀՀ ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանը, ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը, ինչպես նաեւ՝ ՀՀ կառավարության անդամներ, Գերագույն հոգեւոր խորհրդի անդամներ, Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական առաքելությունների ներկայացուցիչներ, կրթության եւ մշակույթի գործիչներ ու բազում ուխտավոր հայորդիներ:

Հայրապետական թափորի ամպիոնակին կրում էին Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի պետական ակադեմիական թատրոնի տնօրեն Կամո Հովհաննիսյանը, ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ Շավարշ Զոլարյանը, «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնի տնօրեն Հարություն Խաչատրյանը եւ «Իզմիրյան» ԲԿ ՓԲԸ գործադիր տնօրեն Արմեն Մուրադյանը: Պատարագին Նորին Սրբությանը, որպես առընթերականներ, սպասավորում էին Մայր Աթոռի լուսարարապետ Հովհանն Եպս Հակոբյանը եւ Մայր Աթոռի վարչատնտեսական բաժնի տնօրեն Մուշեղ Եպս Բաբայանը:

Պատարագի ընթացքում հրաշափառ Հարության տոնի առիթով Գաբրեղի Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայրապետական իր պատգամն ու օրհնությունը հղեց աշխարհասփյուռ հայ ժողովրդին՝ ավետելով. «Քրիստոս յարեալ ի մեռելոց»:



դրեց սերը, որպեսզի կատարյալ լինի մարդը, եւ ոչ չինչ չպակասի մարդուն: Մերը ստեղծում է, կերտում ու հաստատում եւ ոչ՝ կործանում. լուսավորում է, հուսադրում, խինդ ու երանություն է պարգևում եւ ոչ՝ անորոշության ու վիստության մատնում, վիշտ ու տրտմություն բերում: Մերը բարիքի ու երջանկության աղբյուրն է, վեմն է խաղաղության ու արդարության, քաջալերությունը՝ միմյանց աջակցության ու զորակցության՝ հանուն մարդկության բարւոյ, միշտ զարգացող առաջընթաց կյանքի:

Այսօր Քրիստոսի Հարության տոնի բերկրանքի հետ Մեր սրտում նաեւ ափսոսանքն է, որ մարդկության կյանքում ամենուր եւ մշտապես չի դրսևորվում մեր Տիրոջ պատգամած սերը մարդու եւ Աստծո ողջ արարչագործության հանդեպ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհավորական գիր է հղել Հռոմի Նորընտիր սրբազան Քահանայապետին



Մարտի 14-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գաբրիել Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհավորական ուղերձ է հղել Նորին Սրբություն Ֆրանցիսկոս Ա Պապին՝ Հռոմի եպիսկոպոս եւ Կաթոլիկ Եկեղեցու առաջնորդ ընտրվելու առիթով։

Հայրապետական շնորհավորագրում մասնավորաբար ասվում է.

«Սիրեցյալ եղբայր ի Քրիստոս,
Սուրբ Պետրոսի Աթոռի գահակալ ընտրվելու բերկրալի առիթով Ձերո՞ր Սրբությանն ենք հղում եղբայրական սիրո մեր ջերմ ողջույնները եւ շնորհավորանքները։ Մեր աղոթքն է, որ Տերն արգասավորի Ձերո՞ր Սրբության առաքելահաստատ պաշտոնը արդյունաշատ եւ երկարամյա գործունեությամբ՝ ի փառս Աստծո՞ւ եւ ի պայծառություն Քրիստոսի Սուրբ Եկեղեցու։

Քաղցրությամբ ենք հիշում մեր հանդիպումները Ձերո՞ր Սրբության հետ Արգենտինայում, երբ առիթն ենք ունեցել ճանաչել Ձեզ որպես քաջ, իմաստուն եւ արդարամիտ հովվի։ Մենք ուրախ ենք անդրադառնալ Ձեր աւելեղծ սիրուն, որ ցուցաբերում էք հայ ժողովրդի հանդեպ։

Ուրախությամբ ենք հաստատում, որ մեր Եկեղեցիների պատմական հարաբերությունները հատկանշված են եղբայրական ջերմությամբ։ Մեծապես կարելու է ենք այն առաջընթացը, որ արձանագրել են մեր Եկեղեցիները մեր եւ մեր Նախորդների շրջանում՝ փոխադարձ այցերով, կրթական եւ բարեսիրական բազում ծրագրերով։

Աղոթում ենք, որ այս հարաբերություններն առավել հարստանան եւ զարդարվեն սիրո գործակցության խոր ձեռքբերումներով՝ ի խնդիր մարդկության առջեւ ծառացած արդի մարտահրավերների հաղթահարման, ժողովուրդների ու ազգերի միջեւ երկխոսության եւ բարեկամության...»։

Մարտի 18-ի երեկոյան Ն. Ս. Օ. Տ. Տ. Գաբրիել Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեկնեց Վատիկան, ուր մարտի 19-ին ներկա գտնվեց Հռոմի Նորընտիր՝ Ֆրանցիսկոս Պապի գահակալության արարողությանը։

Այցի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսին ուղեկցեցին Մայր Աթոռ Սբ Էջմիածնի հրատարակչական բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը, Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի տնօրեն Հովակիմ Եպս Մանուկյանը եւ գավազանակիր Անանիա արքեպ. Ծատուրյանը։

Նոր նշանակում

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գաբրիել Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր տնօրինությամբ Մայր Աթոռ Սբ Էջմիածնի միաբան Սիփան արքեպ. Գեւորգյանն ազատվել է Մայր Աթոռի դիվանատան Եկեղեցական-ժողովական կառույցների գրասենյակի տնօրենի պարտականություններից եւ հոգեւոր ծառայության կոչվել Զիլիի հայոց համայնքում։

Կարգալուծ է հռչակվել Տ. Չոհրապ քահանա Մազմանյանը

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գաբրիել Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ կարգալուծ է հռչակվել Վիրահայոց թեմի հոգեւոր սպասավոր Չոհրապ քահանա Մազմանյանը՝ հովվական իր ծառայության վայրը լքելու համար։

Այսուհետ կարգալուծ է եկեղեցականը կղասվի աշխարհականների շարքը՝ Էդգար Մազմանյան ավագանի անունով։

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱԲՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՉ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ ՏԵՐ ՀԻՍՈՒՄ ԲՐԻՍՏՈՍԻ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

Սկիզբը՝ էջ 1

Երկու հազարամյակ քարոզվող քրիստոսապատվեր սիրո սերմերն ընկնում են հաճախ Աստծուց հեռացած հոգիների անբերքի ապառաժի վրա կամ արդյունք չեն տալիս մարդկային անհոգության պատճառով, եւ կամ չարն է հափշտակում Տիրոջ կողմից սերմանվածը՝ սփռելով որոմ եւ մոլորեցնելով մարդկանց առ բարին ընթացքների մեջ։ Ներկայիս աշխարհաքաղաքական ու ֆինանսատնտեսական բարդ զարգացումները, զորացող անձնակենտրոն մտածողությունը, հոգեւոր-բարոյական արժեքների անտեսումը նոր հակասություններ ու հակամարտություններ, խնդիրներ ու հոգսեր են առաջ բերում հասարակությունների կյանքում եւ մարդկային հարաբերություններում։ Խաղաղ ու ներդաշնակ կյանքը խաթարող այսպիսի իրողություններից վեր հառնելու ուղին է լուսավորում այսօր հնչող ավետիսը Քրիստոսի Հարության՝ բերելով պատգամը այն կյանքի, որ Աստծո Որդու մեջ է։ Իրական է այդ կյանքը, մատչելի եւ հասանելի ամենքիս։ Երբ մարդկային խոհերն ու գործերը ծնունդ են առնում եւ առաջնորդվում Աստծո հանդեպ հավատքով ու միմյանց հանդեպ սիրով, դա Քրիստոսի մեջ եղող կյանքն է։ Երբ խնամքն ու աջակցությունը հասարակության նկարագիրն ու բնական վիճակն են, դա Քրիստոսի մեջ եղող կյանքն է, երբ 30 արժաթով չեն հարթվում հուղայական կեղծիքի ու մատնության ուղիները եւ պիղատոսյան անտարբերությամբ անարդարություններ չեն իրագործվում, դա այն կյանքն է, որ Քրիստոսի մեջ է, երբ ներության թե լիության մեջ աղոթքը եւ առ Աստված փառաբանությունն են մարդկանց շուրթերին, ու ընտանիքներում հասակ են առնում բարեպաշտ զավակներ՝ դա այն



բյուրներն ու դժվարությունները։ Մերժենք մեր կյանքից երկյուղ, վիատություն եւ ամեն տարակույս, որ կարող են ջլատել մեր ժողովրդին ու մեր միասնականությունը, եւ միմյանց զորակցությամբ իրագործենք հայրենաշեն ու ազգաշեն մեր բոլոր ծրագրերն ու նվիրական նպատակները։ Մեր Տիրոջ կողմից վկայված եւ պատգամված սիրով ապրենք, որպեսզի յուրաքանչյուրիս հաջողությունը, ձեռքբերումը ծառայեն ընդհանուր բարօրությանն ու առաջընթացին, հաղթանակ, փառք ու պատիվ դառնան մեր երկրի եւ ողջ ազգի համար, եւ մենք մնանք հավատարիմ ու սեփական ժողովուրդ Աստծո՝ արժանի Տիրոջ երկնային շնորհներին ու պարգեւներին։

Մեր Տիրոջ հրաշափառ Հարության ավետիսով ի Քրիստոս եղբայրական Մեր սերն ու բարեմաղթանքներն ենք հղում Առաքելական մեր Սբ Եկեղեցու Նվիրապետական Աթոռների գահակալներին՝ Ն. Ս. Օ. Տ. Ս. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսին, Երուսաղեմի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Նուրիան արքեպիսկոպոս Մանուկյանին, Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Մեսրոպ արքեպիսկոպոս Մուրաֆյանին, բոլոր Եկեղեցիների շնորհազարդ հոգեւոր պետերին։

Հարուցյալ Տիրոջ շնորհների հայցով ողջունում ենք Հայաստանի Հանրապետության նախագահ տիար Սերժ Սարգսյանին, ողջույն ենք հղում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահ տիար Բակո Սահակյանին, հայոց պետական ողջ ավագանուն՝ մադրեով արդյունաշատ գործունեություն եւ մնայուն ձեռքբերումներ՝ հանուն մեր երկրի եւ մեր ժողովրդի լուսավոր գալիքի։ Քրիստոսի հրաշափառ Սուրբ Հարության ավետիսով Մեր օրհնությունն ենք բերում Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական առաքելությունների ղեկավարներին ու ներկայացուցիչներին՝ մաղթելով երկնային ամենայն բարիք եւ գործոց հաջողություն։

Հայրապետական Մեր սերը եւ օրհնությունը՝ մեր Սուրբ Եկեղեցու ուխտյալ սպասավորներին եւ հավատավոր Մեր զավակներին ի սփյուռս աշխարհի։

Աղոթում ենք, որ հարուցյալ մեր Տիրոջ շնորհները հեղվեն մարդկանց հոգիներին, որպեսզի աշխարհում ամենուր հաստատվեն եւ արգասավորվեն խաղաղությունը, միմյանց հանդեպ սերն ու արդարությունը։ Թող Տերը խաղաղ պահի մեր Հայրենիքը, մեր ժողովրդին՝ ի սփյուռս աշխարհի, եւ օրհնի բոլոր ջանքերը՝ հանուն մեր կյանքի բարօրության ու մեր հավատքի պայծառության, որպեսզի ազգս հայոց այսօր եւ միշտ խնդությամբ ավետի։

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց.

Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի»։



կյանքն է, որ Քրիստոսի մեջ է, եւ որին Աստծո բարեխնամ շնորհով կանչված է մարդկությունը։

Միրելի՝ բարեպաշտ ժողովուրդ, այսօր մեզ համար շարունակում են մտահոգիչ մնալ հայրենական եւ ազգային մեր կյանքը հուզող լուրջ մարտահրավերները՝ Ղարաբաղի հիմնահարցը, մեր երկրի շրջափակումը, սոցիալ-տնտեսական խնդիրները, արտագաղթը, կեղծ արժեքների ու բարքերի ներթափանցումը։ Անհամգստացնող են նաեւ վիատության, վատախոսելու տրամադրությունները, փոխադարձ վստահության պակասը, միմյանց ունկնդիր լինելու անպատրաստակամությունը եւ անհաշտ պարտադրանքը սեփական ճշմարտության։ Վաճենք մեզանից այսպիսի դրսևորումները։ Մեր ճշմարտությունը նորանկախ Հայաստանն է՝ դարերի անմար երազը մեր պապերի ու հայրերի. ազատագրված Արցախը՝ մեր ոգու նորօրյա հերոսացումը, մեր հպարտ հաղթանակը։ Մեր ճշմարտությունը ներության, դժվարությունների դիմակայող մեր ժողովուրդն է, պատերազմի սպառնալիքի ներքո հայրենի սահմանները պաշտպանող Հայոց բանակը, աշխարհասփյուռ մեր համայնքներն են՝ հանապազ մարտնչող ազգային եւ հոգեւոր ինքնության համար, այսօր վտանգված, հյուծվող սիրիահայ համայնքն է՝ կարոտ սատարումի ու աջակցության։ Այս իրողություններն են մեր առջեւ, սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ։ Մեր Հայրենիքի հզորացման, մեր ծաղկուն կյանքի կառուցման, ազգային վերածնության ու զարթոնքի մեր տեսիլքների ու իդերի իրագործման համար մեկ ճանապարհ ունենք՝ այն կյանքը, որ Աստծո Որդու մեջ է։ Փրկչի հարության ավետիսով նորոգենք մեր ուխտը Աստծո հետ, գոտեպնդվենք հավատքով, հարուցյալ կյանքի հույսով՝ հաղթահարելու համար առկա ներու-



ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ ՉԿԿՈՐ Ե ՀՎԱԿԻՆԵՐԻ (1759-1763)

Սկիզբը՝ թիվ 5

Վերջապես պատրիարքն ու ժողովը հաստատեցին Կարապետի ընտրությունը եւ ստացան արքունիքի հրովարտակը: Կարապետն էլ փակեց Կիլիկիայի նվիրաւորությունը եւ 1762 թվի ապրիլի 7-ին վերադարձավ Երուսաղեմ եւ ստանձնեց պաշտոնը: Նա ծնունդով գանձակեցի էր, 18 տարեկան հասակում Եփրոկիայում հարում է Թեոդորոսին, երբ վերջինս նվիրակ էր, եւ նրա հետ 1734-ին գալիս է Երուսաղեմ: Զետո կրթվելով՝ որպէս նվիրակ ուղարկվում է Ալեք, Ռումելի ու Զոհ՝ Շղթայակրի հրամանով: Նալյանը նրան 1750-ին Կ. Պոլսի փոխանորդ է նշանակում: Վեց տարի անց նա ուղարկվում է Երուսաղեմ՝ Թեոդորոսի եւ միաբանների վեճը հարթելու: 1760-ին կրկին նվիրակ է դառնում. սկզբում՝ Եփրոկիայում, իսկ հետո՝ Ադա-նայում: Պատրիարք դառնալիս նա մոտավորապէս 50 տարեկան էր: 1762 թվի մայիսի 11-ին, երբ տեղի ունեցավ Կ. Պոլսի

մեծ հրդեհը, այրվեցին Մայր եկեղեցու շրջակա շէնքերը, այդ թվում՝ Շղթայակրի կառուցած հոգեւորանոցը: Որոշվեց եկեղեցու շուրջը բաց թողնել, ուստի փոխանորդ Բասմաջյանը 1763-ին Երուսաղեմի միաբանների համար բնակության նոր վայր կառուցեց՝ հետագայի Երուսաղեմատան տեղում:

Անտոնյանները, ինչպէս նշեցինք, ստանալով Չմմառի բլուրը, հանձինս Զակոր Պետրոս Բ-ի, կառուցեցին կաթոլիկ հայերի կաթողիկոսարանը: Շինարարությունն սկսվեց 1749 թվին եւ ավարտվեց 1771-ին: Զակոր Պետրոսը թողեց Զրեյմի վանքը եւ 1750-ին հաստատվեց Չմմառում: Նա իր հետ վերցրեց եւս մի քանի Անտոնյանների: 1752 թվի հունիսի 30-ին սյունահոգոսական ժողովում նա հաստատեց հայազգի Անտոնյանների՝ մարոնական Անտոնյաններին հարմարեցված կանոնագիրը, որն ուղարկվեց Զոմմի պապին՝ վավերացվելու: Այդ կանոնագրին կցված էր Անտոնյան կույսերի կանոնագրությունը եւս, չնայած այն չգործադրվեց: Այդ ժամանակներում՝ 1750 թվին, երկրորդ վանքը կառուցելու համար նոր տեղ ստացան Բեյթ-խաշաու կոչված բլրի վրա՝ Ղազիր եւ Շնանեի գյուղերի միջեւ՝ ծովահայաց մի գեղեցիկ վայրում:

Աբբահայր Գրիգոր Ներսիսյանը Զրեյմում եւ Բեյթխաշաույում կարեւոր շինություններ ձեռնարկելուց հետո՝ 1752-ին, պաշտոնը հանձնեց նորընտիր աբբահայր Ղու-



կաս Աբրահամյանին, որը, շատ չանցած, եպիսկոպոս ձեռնադրվեց հայր Բարսեղ Գեւորգյանի հետ: Որպէս փոխանորդ՝ պաշտոնավարում էր հայր Զովհաննես Կարապետյանը: Կանոնագիրը հաստատելու համար Զոմմ ուղարկվեց հայր Գաբրիել Մատթեոսյանը, իսկ Գրիգոր Ներսիսյանին իրավունք տրվեց Զոմմում սեփական վանք ձեռք բերելու եւ գործը կազմակերպելու:

Զենց այդ ժամանակներում մահացավ Զակոր կաթողիկոսը. որոշ տվյալների համաձայն՝ մայիսի 15-ին, իսկ ըստ մյուսների՝ հունիսի 10-ին, սակայն հիշատակված Զոգեգալստյան օրն այդ տարի համապատասխանում էր մայիսի 30-ին, ինչը համադրելի է նոր տոմարի հունիսի 10-ին: Զակորը հորական անունով Մուրադյան էր, պապականով՝ Զովսեփյան, իսկ կաթողիկոսական անունը Պետրոս Բ էր: Նա նշանավոր էր Անտոնյանների մեջ, համարձակ էր, նախաձեռնող եւ միաժամանակ՝ չափավոր խոհական: Եթե երկու Աբրահամները միաբանության հիմնադիրներն էին, ինչպէս նաեւ՝ կաթողիկոսության, ապա նրանց հաջողությունը շատ բանով պայմանավորված էր Զակորի աջակցությամբ, որը կարողանում էր լինել

նպատակադիր ու հաղթահարել դժվարությունները: Զոմմեականության մեջ էլ նա շատ կատաղի չեղավ եւ իր վրա խիստ քննադատություններ չհրավիրեց: Զակորը թաղվեց Զրեյմում: Նա կամեցել էր եպիսկոպոս ձեռնադրել Միքայել Գասպարյանին, որին Կ. Պոլսից հրավիրել էր Լիբանան, սակայն նա ժամանեց Լիբանան միայն Զակորի մահից հետո: Միքայելը ձեռնադրվեց եպիսկոպոս Ղուկասի եւ Բարսեղի կողմից եւ 1753 թվի հունիսի 23-ին ընտրվեց կաթողիկոս, իսկ Զոմմի պապի կողմից հաստատվեց 1754 թվի մայիսի 6-ին: Սա միաբանության համար պակաս նպաստավոր եղավ: Նա կառեց Արծիվանի գաղափարին եւ կամեցավ իր հոգեւոր իշխանությունը տարածել Օսմանյան կայսրության բոլոր հայ կաթոլիկների վրա, ինչը, սակայն, աջակցություն չգտավ Զոմմի պապության կողմից: Այդ նպատակով Միքայել Պետրոս Գ-ն 1758 թվի ամռանը մեկնեց Զոմմ, բայց պապը 1759 թվի ապրիլի 30-ին վճիռ արձակեց այն մասին, որ նա իշխանություն ունի միայն Կիլիկիայի վիճակներում՝ Կիլիկիայում ու Անտիքում, ինչպէս նաեւ՝ Միջագետքի մի մասում:

Անտոնյանները Բեյթխաշաու վերջնականապէս սեփականացրին 1760 թվի ապրիլի 12-ի վավերագրով եւ ստեղծեցին Սբ Անտոնի վանքը: Երիտասարդներ էին ուղարկում Զոմմի կղերականները եւ աշխատում իրավունք ստանալ Զոմմում վանք ձեռք բերելու համար: Այդ ուղղությամբ ակտիվ գործեց հայր Ռափայել Թումայանը՝ դառնալով աբբահայր, եւ հայր Գրիգոր Ներսիսյանը: Վերջինս անգամ Նեապոլ ու Անկոնա գնաց՝ վանքի համար հարմար տեղ փնտրելու հույսով: Եղավ մի պահ, որ կամեցան Լվովում հաստատվել: Սակայն ստիպված էր պայքարել Նոյնիսկ հայ հռոմեացիականների հարուցած դժվարությունների դեմ: Միքայելը, գտնվելով Զոմմում, երբեք չօժանդակեց միաբանության ձեռնարկին եւ 1760-ից հետո 10 տարի, այնուամենայնիվ, աշխատեց այդ նպատակի համար:

Շարունակությունը՝ էջ 4



Հայոց ցեղասպանության որդադաճանների լուսաբանումը ամերիկյան գրականության մեջ

Հայոց ցեղասպանության որդադաճանների հարցը մինչ օրս էլ մնում է ցեղասպանագիտության առավել ուշագրավ եւ հակասական հարցերի շարքում: Նախ եւ առաջ նշենք, որ ցեղասպանագետների կարծիքով՝ ցեղասպանության ոճիրը չի բխում մեկ պատճառից կամ գործոնից: Ցանկացած եղեռնագործության հիմքում ընկած են փոխկապակցված ու փոխադասարանվորված մի խումբ պատճառներ եւ օժանդակ գործոններ (տե՛ս E. Staub, The Origins of Genocide and Other Group Violence, Cambridge, 1989, էջ 23): Իսկ որո՞նք են, գիտնականների կարծիքով, այն պատճառները, որոնք կարող են ծնել ցեղասպանության նման ծանրագույն հանցագործություն. դրանք են ռասայական ազգային, կրոնական անհանդուրժողականությունը, պետությունների ներքաղաքական եւ արտաքին քաղաքական խնդիրները եւ սոցիալ-տնտեսական գործոնները: Այսպէս օրինակ՝ միջնադարյան Եփրոկայում արձանագրվել են եղեռնագործության դեպքեր կրոնական հողի վրա, իսկ Ամերիկայում՝ ռասայական: Ազգային գործոնը եւս կոտորածների լրջագույն պատճառներից է, քանի որ այլատյացության երեւոյթը դարձրեց շարունակ ուղեկցել է մարդկությանը, եւ, ցավոք, այն առկա է նաեւ ժամանակակից աշխարհում: Ոչ պակաս կարեւոր դերակատարում ունի քաղաքական գործոնը. շատ հաճախ պետությունների ռազմաքաղաքական

վերնախավերը եղեռնը դիտում են որպէս ներքաղաքական եւ արտաքին քաղաքական խնդիրներ լուծելու միջոց: Զավեցնք, որ երբ որեւէ պետության իշխանություններն ի գործ են առնում պատշաճ կերպով կատարելու իրենց պարտականությունները, այն է՝ ճիշտ ուղիով առաջնորդելու երկիրը ու երաշխավորելու բավարար կյանքի մակարդակ հասարակության լայն շերտերի համար, նրանք քաղաքական ու սադրանքների միջոցով փորձում են ազգաբնակչությանը տրամադրել որեւէ սոցիալական խավի դեմ (շատ հաճախ դրանք ազգային կամ կրոնական փոքրամասնություններն են ու ջանում են համոզել մեծամասնությանը, թե առկա խնդիրների միակ մեղավորն ազգային կամ կրոնական փոքրամասնություններն են: Այլ խոսքերով՝ յուրաքանչյուր ծախողակ կառավարություն ամեն կերպ փորձում է քաղաքական խառնակ գտնել՝ պատասխանատվությունից խուսափելու նպատակով: Անկասկած, ցանկացած հասարակության առավել ողջամիտ ու կրթված մասն ունակ է ճիշտ գնահատելու իրավիճակը ու չտրվելու սեփական վերնախավի սադրանքներին, սակայն յուրաքանչյուր ժողովրդի մեջ խավարամոլ մարդիկ, որպէս կանոն, մեծամասնություն են կազմում, եւ հենց այս գանգվածն է ստանձնում եղեռնագործի անպատվաբեր ու պախարակելի դերը: Ինչ վերաբերում է սոցիալ-տնտեսական գործոնին, այն եւս,



որոշ ցեղասպանագետների համոզմամբ, կարող է եղեռնի պատճառ հանդիսանալ (տե՛ս G. S. Graber, Caravans to Oblivion, New York, 1996, էջ X): Իսկ որո՞նք են հայոց ցեղասպանության հիմնական պատճառները եւ նպաստող գործոնները: Որքան էլ տարօրինակ թվա, այս հարցը չունի միանշանակ պատասխան, եւ դա այն դեպքում, երբ հայոց եղեռնի պատմական ասպեկտին են նվիրվել մեծ թվով ուսումնասիրություններ: Եղեռնի պատմական վավերական հայեցակետը լուսաբանվել է նաեւ գրական մի շարք երկերում, եւ այստեղ կրկին չկա միասնական տեսակետ հայ լիտորաձեռների դրդապատճառների վերաբերյալ: Սրա

պատճառն ակնհայտորեն այն է, որ պատմական աղբյուրները հաճախ հակասական տեղեկություններ են հաղորդում հայոց ցեղասպանության դրդապատճառների վերաբերյալ (տե՛ս R. Hovhannisian, The Armenian Genocide in Perspective, New Brunswick, Transaction Press, 1987, էջ 43-81): Այժմ տեսնեք, թե ինչպէս են ամերիկացի գրողները լուսաբանում հայոց ցեղասպանության դրդապատճառների հարցը: Այսպէս օրինակ՝ ամերիկահայ գրող Լեոն-Չավեն Սյուրմեյանի «Ձեզ եմ դիմում, տիկնայ՛ք եւ պարոնայ՛ք» վեպի որոշ հերոսներ կարծիք են հայտնում, թե հայոց ջարդերի դրդապատճառը հայ քաղաքական գործիչ-

ների արկածախնդրությունն է եւ հայկական ինքնավարության մասին նրանց պահանջները (տե՛ս L. Z. Surmelian, I ask you, Ladies and Gentlemen, New York, 1945, էջ 63, 84): Նույնպիսի տեսակետ է արտահայտված մի շարք այլ գրողների երկերում, ինչպէս օրինակ՝ Էլջին Գրոսքլուսի «Արարատ» վեպում (տե՛ս E. Groseclose, Ararat, London, 1939, էջ 20-21, 60-61): Առաջին հայացքից այս տեսակետը միանգամայն ճշմարտացի է ու հիմնավորված: Առհասարակ, եթե որեւէ երկրում որեւէ ազգային փոքրամասնություն ինքնավարության պահանջ է առաջ քաշում, ապա դա, որպէս կանոն, խնդիրներ է առաջացնում տվյալ եթնիկական խմբի համար: Բնական է, որ տվյալ պետության վերնախավը քայլեր է ձեռնարկում երկրի տարածքային ամբողջականությունը պահպանելու համար: Զստակեցնենք, թե ինչ քայլերի մասին է խոսքը: Դա կարող է լինել ինքնավարություն պահանջող քաղաքական գործիչների հալածանքներն ու հետապնդումները, ընդհուպ մինչեւ նրանց ֆիզիկական ոչնչացումը: Սակայն երբեմն հալածանքների թիրախ են դառնում եւ բնաջնջման վտանգի առաջ կանգնում հազարավոր մարդիկ, ովքեր ազատագրական շարժման հետ անմիջական առնչություն չունեն: Այդպէս եղավ 1915 թ. ցեղասպանության ժամանակ: Նույն բանը կարելի է ասել Սում-գայիթի ու Բաքվի ջարդերի մասին: Ցեղասպանագիտության մեջ կա մի տեսակետ, թե նույնիսկ երեւակայական վախի զգացումը կարող է եղեռնի պատճառ դառնալ (տե՛ս G. S. Graber, նշվ. աշխ., էջ XI):

Շարունակությունը՝ էջ 5

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1960-1980-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ (Հափաժո, արձակ, թատերգություն)

Ա. ԶԱՓԱԾՈ

Սկիզբը՝ 2012-ի թիվ 23-24, 2013-ի թիվ 1-5
Բնության երգը՝ որպես համընդհանուր մարդկության մի դրոշմ, դեռևս իր առաջին գրքերից սկսած հնչեցրել է **Հ. Ծիրազը**։ Իսկ վերջին տարիների համանման գործերը նա գետնից է իր ժողովածուների «Զնար բնության» եւ «Գարնանամուտ» շարքերում։ Առաջին շարքին Ծիրազը բնաբան է դրել Վ. Շեքսպիրի «Դու ես, բնություն, իմ աստվածուհին» տողը՝ դրանով իսկ ճշտելով իր խոսքի նախադրյալներն ու չափանիշները։

Ծիրազի աշխարհայեցողության մեջ բնությունը կեցության արդարությունը վերականգնելու, մարդու եւ մարդկության հոգեւոր ուժերն իր անխաթար վիճակի մեջ պահպանելու նախադրյալ է։ Բնության հետ նա հաղորդակցվում է նաեւ իր բողոքների ու ընդվզումների պահին, երբ մարդկային անցողիկ կյանքը համեմատում է բնության հավերժական տարերքի հետ («Հավերժը քեզ, վայրկյանն ի՞նձ. բողոք բնությանը»)։ Բոլոր դեպքերում բնության հետ հաղորդակցումն ունի մեկ գլխավոր նպատակ. այն է՝ անկատար մարդուն հասցնել բնության կողմից նախասահմանված կատարելության։

Հայ քնարերգության մեջ Ծիրազը գարնանամուտի բնապատկերի բանաստեղծն է, որը ժառանգորդական կապերով առնչվելով հայ միջնադարյան պոեզիայի գարնան եւ ուրախության երգերին՝ գալիս է հաստատելու դրանց կենսականությունը՝ իբրեւ ավանդույթի յուրահատուկ մի գիծ։ Ծիրազն իր քնարերգությամբ հայ պոեզիա բերեց հարավի տաք քամիների շունչը, գարնան առավոտների լույսը, ծաղկած մարգագետինների, արտերի ու այգիների բույրը, ծառի ու ծաղկի փարթամ շռայլությունը։ Ասվա-

ծի վկայություններն են «Մայր բնություն՝ աստծո քնար վիթխարի», «Բնության ձայնը», «Թագադրում», «Գարնանամուտ», «Երեւանի շոգը», «Սիրտս ալեւոր կաղնու մեջ դրի», «Տուն վերադարձան հնձվորներն հանդից» բանաստեղծությունները։

Ընդհանուր առմամբ բնության տարերքն է ձեւավորել Ծիրազի մտածողությունը՝ ստեղծելով համապատասխան պատկերներ ու արտահայտչական միջոցներ։ Բնությունից է նա վերցնում չափի ու ժամանակի այնպիսի եզրեր, ինչպիսիք են մեծ մասշտաբները եւ հավերժությունը, որոնք անչափ վճռորոշ են նրա խոսքի ներքին կառուցվածքի համար։ Այդ են վկայում նրա թե՛ առանձին պատկերներ, ինչպես. «Երբ նայում եմ Մասիս սարին, ինձ թվում է բեմն է հայոց, Իսկ վարդագույն իր մշուշը վարդագույն է իր ոսկեգոծ» («Երբ նայում եմ...»), թե՛ ամբողջական բանաստեղծություններ («Հայ ժողովրդի երգը», «Դաշտն Արարատյան», «Վարդան Մամիկոնյանի հավերժությունը»)։

Համանման շատ գործերում Ծիրազի ձիրքը հատկապես վառ դրսևորում է ստանում բնապատկերի եւ մարդկային հոգեվիճակների զուգորդությունների մեջ, որը միշտ էլ նրան հասցնում է պատկերային գյուտերի։ Միաժամանակ այդ կապի մեջ է ուրվագծվում Ծիրազի փիլիսոփայական խորհրդածությունների սահմանը։

Բնությունը, բնապատկերը մի տեսակ անհրաժեշտ հենք են նաեւ **Մահարու, Դավթյանի, Մարգարյանի, Ալիքյանի** պոեզիայի համար։ Նրանք կարծես թաքուն շարունակում են բնության քնարերգության եւ երկաթե տեխնիկայի փառաբանման հին բանավեճը։ **Լ. Դուրյանը** երանի է տալիս ծեր սերմնացանին, քանի որ «Ամբողջ մի կյանք քոնը դարձան Կայծակ, անձրեւ ու ծիածան»։ Այնուհետեւ


նա խոսում է տրոփվող բնության եւ ժամանակի հարաբերության մասին ու եզրակացնում. «Դեռ բանաստեղծին այսպես էր ատել Ոչ մի, ոչ մի դար», քանի որ բանաստեղծը հիմա ամբողջովին բնության կողմն է եւ ոչ թե՛ երկաթե առաջընթացի։

Բնության քնարերգությունն ամբողջությամբ արտացոլում է մարդու եւ ժամանակի հարաբերության մի առանձնահատուկ կողմը, առանց որի անհնար է պատկերացնել իր բնական վիճակը կորցնել չցանկացող ժամանակակից մարդուն։

Հոգեւոր բոլոր չափումների մեջ դիտվող մարդն ըստ ամենայնի բացահայտում է եւ իր հոգու ամենանրբին ապրումները։ Անհատապաշտության, ենթակայական անձնավորվածության եւ համանման շատ այլ ծանր մեղադրանքներ հաղթահարելուց հետո **սիրերգությունն** այս տարիներին ձեռք է բերում հանրային լայն հնչեղություն։

Սիրային բանաստեղծությունները **Պ. Սեւակն** ի մի բերեց «Եղիցի լույս» գրքի «Նորից չեն սիրում, սիրում են կրկին» շարքում։ Նա շարունակեց իր քնարական հերոսի սիրո պատմությունը, որ սկսել էր նախկին շարքերում («Նույն ճամփով», «Նույն հասցեով») եւ պոեմներում («Ուշացած իմ սեր», «Երգ երգոց», «Նահանջ երգով»)։

Պատանեկան տարիների սիրո խանդաղատանքն աստիճանաբար դառնում է դժվարին կյանքում ապրելու միակ ու անփոխարինելի ուժ։ Առաջացող կյանքին համընթաց այդ զգացմունքը տեղափոխվում է ավելի բարդ հարաբերությունների մեջ։ Այն պատկերվում է որպես հոգին տակնուվրա անող ազատ ու անակնկալ տարերք, որ գալիս խորտակում է նախկին պատկերացումները սիրո մասին («Անսպասելի փոթորիկ», «Օտար սիրո այբուբենը», «Սովորական հրաշք», «Եր-



կու սիրո արանքում» եւ այլն) եւ մղում այսպիսի ծանր ու դժվարին խոստովանության. «Պարտականության ու սիրո միջեւ Այդ ես եմ տնկված՝ Ուղեփակոցի գերանի նման <...> Այսպես չե՞ն սիրում։ Այսպես... մեռնում են մի դանդաղությամբ, Որով փտում են հին նավակները ծովախորշերում...» («Այսպես չեն սիրում»)։

Սեւակի այս տարիների սիրերգության մյուս առանձնահատուկ կողմն այն է, որ սերը դիտվում է ժամանակի հոգսերի մեջ։ Բեռնա ներքո կքած մարդն անասելի դժվարությամբ է պահպանում իր թանկ սերը, որը նրա համար փրկություն է կյանքի ճահիճից («Հպատակի խռովությունը», «Բեռնա ներքո», «Հասարակ պահանջ»)։ Սիրո երկար ճանապարհ անցած անհատն աստիճանաբար սերը վերածում է կնոջ կատարելատիպի, որը հայտնվում է Տիրամոր պատկերով։ Տիրամոր պատկերը խորհրդանշում է ե՛ւ կին արարածին, ե՛ւ սիրո սրբագործումը։ Ինքնահաշտեցման աղերսը դառնում է մարդուն մարդ պահելու գերագույն պահանջ եւ ուղղվում Տիրամորը («Բարեխոս եղի իմ եւ իմ միջեւ»)։

Պառնակված անհատն ինքնահաշտության է ձգտում ե՛ւ ինքն իր ներսում, ե՛ւ իրենից դուրս՝ աշխարհի հետ ունեցած հարաբերությունների մեջ։ Սերը Սեւակի քնարերգության մեջ ահա ձեռք է բերում մարդու ամբողջականությունը վերականգնող հզոր գործոնի դեր։

Շարունակությունը՝ էջ 5

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՒԴՈՍՈՒՆԵՐ ՀԱԿՈՐ Ե ԸՎԱԿՆԵՋԻ (1759-1763)

Սկիզբը՝ էջ 3

Նա հայ հռոմեականներից հեռու մնալու մտադրությամբ Սբ Մարիամ Եգիպտացու եկեղեցուն հարակից հայկական հյուրանոցից հեռացավ եւ քաշվեց կաթոլիկական Սբ Պանթալեոնի վանքը։ 1762 թվի հուլիսի 15-ին նա նոտարական վավերագրով գնեց Վատիկանի հրապարակի վրա գտնվող Չեզի դքսերի ժառանգական ապարանքը՝ հարակից այգիով եւ պարտեզով, որը վերածեց Սբ Գրիգոր Լուսավորիչ վանքի։ Գումարը հայթայթեց Թադեոս Գոլոտյան վարդապետը՝ քաղաքից քաղաք շրջելով։ Չնայած նրա բացակայությանը՝ միաբանությունը 1761 թվի եռամյա ժողովում հայր Գրիգոր Ներսիսյանին կրկին աբբահայր ընտրեց։ 1766 թվի օգոստոսի 17-ին նա կատարեց եկեղեցու նավակառուցը։

Պարսկաստանի խառնակ դրության պատճառով կացությունը բարդ էր նաեւ Էջմիածնում։ Բոլոր իշխանավորներն աչք էին տնկում Էջմիածնի վրա՝

նրա ենթադրյալ գանձերից օգտվելու համար։ Նման շահագրգռությունների հիմնական թիրախը Հակոբ Շամախեցի կաթողիկոսն էր՝ թե՛ տեղակալության եւ թե՛ հայրապետության օրոք։

Պարսկաստանում մրցակցյալ իշխանավորների մեջ ամենից նշանավորն այդ շրջանում Զեքիմ խանն էր՝ Չենդերի ցեղապետը։ Ալիմերդանը նրան դարձրել էր իր օգնականն ու աջակիցը, ուստի Ալիմերդանի սպանվելուց հետո Զեքիմն անցավ իշխանության գլուխ եւ Իսմայիլ իշխանագուսն տղայի վրա թագավորի անունը պահելով՝ բացարձակ իշխանությունը վերցրեց իր ձեռքը՝ որպես վեքիլ կամ խնամակալ։ Նա նրա անունից պատերազմում էր մյուս մրցակիցների դեմ։ 1761 թվին նա Սպահան քաղաքի եւ Պարսկաստանի արեւմտյան գավառների տերը դարձավ։ Սակայն պատերազմները ոչ միայն չղաղարեցին արեւելյան նահանգներում, այլեւ ապստամբություններ բռնկվեցին արեւմտյան մարզե-



րում։ Պատերազմներն անպակաս էին նաեւ Հայաստանի տարածքում։ Նոր հայտնված Ֆաթալի խանը բռնությունների եւ հատկապես Տաթևի միաբանների նկատմամբ գործված ոճրագործությունների համար սպանել տվեց Զեքիմին։ Չնայած Զեքիմը որպես արդարամիտ ու ժողովրդասեր անձ է ներկայացվում, բայց դա չխանգարեց, որ պատերազմները շարունակվեն մինչեւ 1779 թվը, այսինքն՝ իր իշխանության ավարտը։ Հասկանալի է, որ Շամախեցին հանգիստ ու դադար չունեցավ այդ ամբողջ ընթացքում։ Նա արդեն տարիքն առած էր՝ դժվարություններից հոգնած։ Մահացավ

1763 թվի մարտի 21-ին՝ հովվապետելով երեքուկես տարի։ Հաջորդ օրը, որ Ավագ շաբաթն էր, նրան հողին հանձնեցին Սբ Գայանեի բակում՝ աջակողմում։

Հակոբ Շամախեցին, անշուշտ, պատկանում է արժանավոր հայրապետների թվին։ Համեստ, սակայն օգտակար պաշտոններ է վարել, երկար ժամանակ եղել է կաթողիկոսի տեղակալ, տոկացել է վրահաս բոլոր դժվարություններին։ Նա կազմել է «Գավազանագիրք», որն սկսել է 1743 թվին՝ դեռ Դուկաս Ջահկեցու օրոք։ Այդտեղ արձանագրվել են Մայր Աթոռի բոլոր անցքերը։ Եղել է նաեւ լավ քաղաքագետ։ Նա առաջինն էր, որ Իսրայել Օ-

րուց հետո կրկին հայացքն ուղղեց դեպի հյուսիս։ 1760 թվի հուլիսի 20-ին Ռուսաց կայսրուհի Ելիզավետային նամակ գրեց՝ խնդրելով հոգ տանել հայոց խեղճ ժողովրդին ու վրացիներին։ Հակոբ Շամախեցու օրոք Ռուսաստանում այլազգիներին հալածում էին, եւ երբ փակվում էին ուրիշ եկեղեցիներ, մնաց միայն Աստրախանի հայոց եկեղեցին։ Նա էր, որ զարկ տվեց հայերի ռուսական կողմնորոշմանը։

1763 թվի փետրվարի 22-ին՝ Շամախեցուց մեկ ամիս առաջ, Կարնում մահացավ Սահակ Ա-հագինը։ Նա հողին հանձնվեց Կարն Սբ Լուսավորիչ վանքի մոտ։ Թաղման արարողությունը գլխավորեց Սիմեոն Երեւանցին, որը Կ. Պոլսի նվիրակությունից վերադառնում էր Էջմիածին։ Նրան մեծապես խանգարեց իր տատամսոտ բնավորությունը։ Չմոռանալ, որ հակառակ իր խոստմանը՝ վճարները չկատարեց, որը Շամախեցու հետ մեծ բախման պատճառ դարձավ։ Միայն Կ. Պոլսի ամիրաների միջնորդությունից հետո Շամախեցին հրաժարվեց իր պահանջներից, եւ խնդիրը փակվեց, ու նրանց միջեւ հաշտություն կայացավ։

Բաբկեն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՀՀ ԳԱՍ թղթակից անդամ,
պրոֆեսոր



Սկիզբը՝ էջ 3

Այսինքն՝ ազգասպանները եղեռն են իրականացնում հետագայում հնարավոր վտանգներից ձերբազատվելու նպատակով: Որքանո՞վ է ցեղասպանագետ Ջորջ Գրաբերն իրավացի իր տեսակետի մեջ: Բանն այն է, որ եթե եղեռնագործները հալածեին ու ոչնչացնեին բացառապես այն քաղաքական գործիչներին, ովքեր ինքնավարության պահանջներ են առաջ քաշում, ապա Գրաբերի տեսակետը կլիներ միանշանակ հիմնավորված: Սակայն ոչ մի երեւակայական վախի զգացում չի կարող արդարացում հանդիսանալ մանկահասակ երեխաների, կանանց ու ծերերի սպանդի համար: Ավելի ողջամիտ կլինի ենթադրել, որ ազգասպանների վերը ներկայացված փաստարկը սեփական հանցանքն արդարացնելու անհաշող փորձ է: Առնվազն այսպես է մտածում ցանկացած ողջամիտ մարդ: Այդպիսին էին այն օտարերկրացիները, ովքեր չէին հավատում երիտթուրքերի այն պնդումներին, թե հայության լիակատար բնաջնջումն անհրաժեշտ է Թուրքիայի անվտանգությունը երաշխավորելու համար: Ադրբեջանական կառավարությունը թերեւս նույն կերպ կփորձեր արդարացնել ադրբեջանահայերի զանգվածային շարդերը, եւ թող չստեղծվի այն թյուր պատկերացումը, որ եթե չլինեւ Արցախի անկախության հարցը, չէին լինի նաեւ Սումգայիթի, Բաքվի ու Ադրբեջանի մյուս շրջաններում տեղի ու-

Հայոց ցեղասպանության որդադաճառների լուսաբանումը ամերիկյան գրականության մեջ

Նեցած եղերական դեպքերը: Իսկ ջարդերի բուն պատճառները շատ ավելի խոր էին. ադրբեջանցիներին հատուկ անհանդուրժողականությունը եւ նրանց շովինիստական էությունը: Իհարկե, այստեղ շատ կարեւոր դեր է խաղացել նաեւ իշխանությունների տրամադրվածությունը, որը քաղաքական դիվիդենտներ շահելու նպատակով հակահայկական քարոզչության եւ սադրանքների միջոցով ադրբեջանցիների առավել խավարամոլ մասին դրդել էին հայկական կոտորածն իրականացնելուն: Վերջին հաշվով ոչ մի ցեղասպանություն ինքնաբերաբար չի իրագործվում: Այն, որպես կանոն, կազմակերպվում ու հովանավորվում է պետությունների ռազմաքաղաքական վերնախավերի կողմից (տե՛ս E. Staub, նշվ. աշխ., էջ 23-24): Թերեւս սխալ չի լինի ասել, որ ժողովուրդն ընդամենը կույր գործիք է իշխանությունների ձեռքում: Բայց եւ այնպես, եթե որեւէ ազգ չունի շովինիստական էություն, ապա որքան էլ պետական վերնախավը ջանա ազգամիջյան խժոժություններ առաջացնել, միեւնոյն է, ոչինչ չի ստացվի: Դրա մասին է վկայում այն փաստը, որ որոշ երկրներում պարբերաբար ցեղասպանության դեպքեր են արձանագրվում, իսկ մի շարք երկրներում (խոսքը հիմնականում վերաբերում է եվրոպական երկրներին, որտեղ հանդուրժողականությունը կարեւորագույն արժեք է համարվում) նման իրադարձություններ չեն արձանագրվում: Վերադառնալով առկա հոդվածի բուն թեմային՝ նշենք, որ Լեւոն Զավեն Սյուրմեյանի «Ձեզ եմ դիմում, տիկնայ՛ք եւ պարոնայ՛ք» վեպի որոշ հերոսների պնդումները, թե հայկական ջարդերի պատճառը հայ քաղաքական գործիչների անխոհեմ գործունեությունն էր, այնքան էլ ճշմարտանման չեն: Առնվազն դրա մասին եւ վկայում վերը ներկայացված վերլուծությունները: Այժմ հարց է առաջանում. ո՞րն էր իրականում հայոց կոտորածների բուն շարժառիթը: Պատմագիտության եւ ամերիկյան գրականության մեջ կա մեկ այլ տեսակետ, համաձայն որի՝ հայերը բավականին բարձր հասարա-

կական դիրք էին գրավում Թուրքիայում, ակտիվ դերակատարում ունեին այդ երկրի սոցիալ-տնտեսական ոլորտում եւ զգալի հարստության էին տիրապետում (տե՛ս G. S. Graber, նշվ. աշխ., էջ 26): Եթե ասվածը չափազանցություն չէ, ապա դա, իհարկե, չէր կարող չարժեք տասնյակ հազարավոր թշվառ ու ջքավոր թուրքերի նախանձը, չարության ու ատելության զգացումներ չառաջացնել հայ ժողովրդի հանդեպ: Առաջին հայացքից սոցիալ-տնտեսական վարկածը միանգամայն տրամաբանական է թվում: Համաշխարհային պատմությունը վկայում է, որ երբ որեւէ ազգային փոքրամասնություն որեւէ երկրում բարձր հասարակական դիրք է գրավում եւ զգալի նյութական կարողություն է ձեռք բերում, ապա դա մեծամասնության մոտ տպավորություն է ստեղծում, թե տվյալ փոքրամասնությունը հետզհետե գերիշխողի դեր է ստանձնում, այլ կերպ ասած՝ դառնում է իր պետության փաստացի տերը: Նման կարգավիճակում հաճախ հայտնվում էին հրեանք, որոնք դարձել շարունակ տարբեր երկրներում զգալի նվաճումներ էին ունենում հասարակական կյանքի ամենատարբեր բնագավառներում՝ մասնավորապես առևտրի, արհեստների, արվեստի, կրթության եւ գիտության ասպարեզներում: Մեծ էին նաեւ հրեաների ձեռքբերումները ֆինանսական աշխարհում: Այսօրվա դրությամբ էլ հրեաները շատ երկրներում լուրջ դիրքեր են գրավում եւ վիթխարի նյութական կարողության տեր են: Թերեւս նշված պարագաներով կարելի է բացատրել, թե ինչու հրեա ժողովուրդը դարձել շարունակ հալածյալի եւ վտարանդիի կարգավիճակ է ունեցել: Հրեաների նկատմամբ պարբերաբար կազմակերպվել են նաեւ զանգվածային ջարդեր, որի գագաթնակետը եղավ հրեական ցեղասպանությունը Նացիստական Գերմանիայում: Վերն ասվածից կարելի պարզ տրամաբանական եզրակացություն անել. սոցիալ-տնտեսական եւ ֆինանսական գործունեությունը կարող են ցեղասպանության պատճառ հանդիսանալ, ինչը, սակայն, չի

բացառում այլ գործոնների կարեւորությունը՝ մասնավորապես քաղաքական, կրոնամշակութային, ազգային եւ ռասայական: Վերադառնալով սույն հոդվածի բուն թեմային՝ փորձենք վերջնականապես պարզել, թե արդյո՞ք սոցիալ-տնտեսական գործոնը կարող էր վճռորոշ լինել կոնկրետ հայոց ցեղասպանության դեպքում: Անկասկած՝ հայոց եղեռնը թուրք խառնամբոխին լայն հնարավորություն էր ընձեռում թալանել հայերի տարիներով կուտակած ունեցվածքը, նրանց ֆինանսական միջոցները: Սակայն եթե փոքր-ինչ խորանանք պատմության մեջ, ապա կհամոզվենք, որ սոցիալ-տնտեսական գործոնը չէր կարող լինել վճռորոշ: Եթե կարճաժամկետ առումով հայերի կոտորածը միանշանակ ձեռնու էր թուրքերին, քանի որ այն, ինչպես արդեն նշվեց, թալանի լայն հնարավորություն էր ընձեռում, ապա երկարաժամկետ առումով հայոց եղեռնը չէր կարող շահավետ լինել Թուրքիայի համար: Բանն այն է, որ ցեղասպանության ընթացքում այդ երկիրը կորցրեց իր համար կարեւոր մարդկային ռեսուրսներ՝ հարյուր հազարավոր արհեստավորներ, վաճառականներ, կրթության, գիտության, մշակույթի գործիչներ եւ այլք: Ստացվում է այնպես, որ հայերի բնաջնջումն առնվազն երկու-երեք տասնամյակով հետգցեց Թուրքիայի սոցիալ-տնտեսական կյանքը, իսկ այդ երկիրն առանց այդ էլ խոր ճգնաժամի մեջ էր Առաջին աշխարհամարտի շրջանում: Քանի որ երիտթուրքերը բավականին կրթված ու հեռատես մարդիկ էին, նրանք դժվար թե չհասկանային, որ հայերի ոչնչացումը ոչ մի կերպ չէր կարող նպաստել իրենց պետության զարգացմանը: Կարելի է եւս մեկ փաստարկ բերել ցեղասպանության սոցիալ-տնտեսական շարժառիթի դեմ: Ինչպես հայտնի է պատմությունից, Թուրքիայում, բացի հայ մեծահարուստներից, կային նաեւ բազմաթիվ հույն մեծահարուստներ, իսկ երկրի սոցիալ-տնտեսական կյանքում զգալի դեր էին խաղում ոչ միայն հայերը, այլեւ հրեաներն ու արաբները:

Շարունակությունը՝ էջ 7

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1960-1980-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Սկիզբը՝ էջ 4

Յ. Սահյանի սիրերգության հերոսը կյանքում դժվարությամբ իր տեղը գտած անհատն է, որ կարծես միշտ վրիպել է ուշադրությունից, բայց եւ շրջապատին հաճոյանալու փորձեր չի արել, այլ մնացել է այն, ինչ կա: Եվ ահա նրա եւ սիրո հասցեատիրոջ միջեւ սկսվում է հանդարտ հաղորդակցում՝ բացելով հոգու տառապանքն ու սիրո հանդիպման բերկրանքը: Սահյանի սիրերգության մեջ ստեղծվում է մի այնպիսի վիճակ, որ սիրո ճակատագրական պահը կարծես չի գտնվել, եւ մարդն ապրել է չկայացած, չստացված մի կյանք: Մերը կարծես փախչում է ամեն մի պահի: Դժվար ստեղծված մտերմությունը ճեղք է տալիս, եւ բացակա մի գոյություն հուշով գալիս ու խափանում է ստեղծված հոգեւոր կապը («Եւ ինչ-որ մեկին գրկել եմ քեզկից...», «Դու իմ գրկի մեջ ուրիշինն էիր...»): Սահյանը բացում է հոգեւոր աներեւույթ դրամայի ողբերգությունը, ուր սերն անընդհատ փորձության է ենթարկվում եւ այդպես էլ միասնության մեջ անգամ երկուսին պահում առանձին եւ օտար («Չես ասի ոչ մի բառով», «Պատահում է սիրտդ լցվում...», «Եվ չիմացանք, թե ինչո՞ւ»): Սահյանի սիրերգության հիմնական բովանդակությունը մեղքերի միջով անցած եւ իրար որոնող մարդկային հոգիների տառապանքն է. մերձեցումը, սակայն,

հեռացնում է նրանց, հեռացումը՝ մերձեցնում:

Այս հոգեվիճակներին **Յ. Շիրազը** հակադրում է վարար ու բռնկուն սիրո տարրերը: Կարեւոր հատկանիշը, որ բնորոշում է նրա սիրերգությունը՝ սիրո բուռն ու ինքնամոռաց ապրումն է, անմնացորդ ինքնայրումը՝ հանուն սիրելի կնոջ, հանուն կնոջ տեսքով հայտնված գեղեցկության: Մերը նա հասցնում է պաշտամունքի. «*Կնոջ շուրջն է պահում տիեզերքը կանաչ*» («Միայն սերը»), «*Օղն ինքը սեր է, ինչպես մահն է սեր*» («Մերն աշխարհակալ»):

Շիրազի սիրերգության մեջ տեղ ունեն սիրո գրեթե բոլոր հոգեվիճակները՝ բռնկուն սերը, սիրո վայելքը, մերժումը, մեղությունը, խաբվածությունը, հիասթափությունը, կարողություն, տառապանքը: Սիրո տարբեր հոգեվիճակների մեջ տարբեր է նաեւ Շիրազի խոսքի զգացմունքային լիցքը, հոգեկան ուժը: Նա մե՛րթ մեղմ է ու նրբախոս («Գիշերերգ վաղեմի հեթանոսուհու», «Մեղեդի սուգի եւ սիրո»), մե՛րթ բռնկուն ու խենթ («Հեթանոսի երգը», «Ցերկներս քրիստոնյա, գիշերներս հեթանոս», «Գազել Շամիրամին»):

Շիրազը շատ որոշակիորեն կնոջ մեջ առանձնացնում է երկու հզոր, բայց իրարամերձ ուժեր՝ աստվածայինը եւ սատանայականը: Այս երկվությունը նա անընդ-

հատ սրում է՝ կնոջը պատկերելով հոգեբանական տարբեր վիճակների մեջ: Ահա կնոջ էությունը՝ ըստ նրա պատկերացումների. «*Մի աչքդ դժոխք, մի աչքդ դրախտ՝ Դժոխք ու դրախտ իրար խառնվել, Ախ, կին ես դառել...*» («Ուրիշ մի դուռ էր...»): Կնոջ հանդեպ ունեցած այս վերաբերմունքի առիթը, ըստ Շիրազի, տղամարդու խաբվածությունն է սիրո մեջ:

Ընդհանրապես կին արարածի առեղծվածային բնույթին Շիրազը շատ է անդրադառնում՝ կնոջ մեջ տեսնելով նաեւ կյանքի ու աշխարհի հավիտենությունը («Կինն հավերժական», «Հավիտենական առեղծվածը»):

Պ. Մեւակի եւ Յ. Սահյանի պատկերած կենսական վիճակներում գործող հերոսուհուն Շիրազը հակադրում է կնոջ խորհրդանշական կերպարը, որը հավերժականի խտացումն է, ոչ թե՛ պահի ծնունդ: Այդ կինն ունի արեւելյան զոգալի արտաքին, որի կերպավորման համար արտահայտամիջոցներ Շիրազը որոնում է ե՛ւ հայ (հայրեններ, Սայաթ-Նովա), ե՛ւ պարսկական (Օմար Խայամ, Ջաֆեզ) միջնադարյան պոեզիայի բանարվեստում:

Կնոջ խորհրդանշական կերպարն ու առեղծվածային գոյությունն են պայմանավորում նաեւ **Վ. Դավթյանի** սիրերգության բնույթը, որի կենսական նախադրյալներն ստեղծում են հոգեւոր կյանքի շարունակա-



կան պատմություն: «Անկեզ մորենի» գրքում Վ. Դավթյանի սիրային գործերը համախմբված են «Ծովի օրենքով» շարքում: Այս խորագրով կարելի է ի մի բերել նրա ամբողջ սիրերգությունը, որն ապրում է հենց ծովի օրենքով՝ հոգեւոր կյանքի տեղատվությամբ ու մակընթացությամբ:

«Գիրք ծննդոց» պոեմում բանաստեղծը ներկայացնում է մարդու հոգեւոր ուժերի սկզբնավորումը: Սկզբից եւեթ մարդու երջանկության հույսն ի դերեւ է ելնում եւ փոխարինվում տեսիլքի:

Շարունակությունը՝ էջ 6

ՀՈՎԻՎՆ ՈՒ ՆՐԱ ՀՈՏԸ

ԿԵՆԴԱՆԻ ԱՍՏԾՈՒ ՏԱՖԱՐ ԵՔ ԴՈՒՔ

Ձեր հարցերին պատասխանում է Սիբայել աբեղա ԳԵԿՈՐԳՅԱՆԸ:
Ձեր անունից հարցերն ուղղում է մեր թերթի արտահաստիքային թղթակից Անժելա ԽԱՉԱՏՐՅԱՆԸ:

- Հայր սուրբ, սբ Պողոս առաքյալը կորնթացիներին ուղղված իր առաջին թղթում ասում է. «Աստծու տաճար եք դուք, եւ Աստծու Հոգին է բնակվում ձեր մեջ... Սուրբ է Աստծու տաճարը, որը դուք եք» (Ա Կորնթ. Գ 16-17): Ինչո՞ւ է առաքյալը մարդուն կենդանի Աստծո տաճար անվանում: Ինչպե՞ս հասկանալ:

- Սուրբ Գր. Տաթևացին ասում է, որ Աստծո եկեղեցին՝ Աստծո տունը, երկու նշանակություն ունի, նախ՝ Աստծո տաճար է քարեղեն այս շինությունը, որը ջրով մաքրվում, գինով լվացվում եւ մյուսն ունի օծվում է՝ դառնալով Աստծո տաճար՝ երկինք երկրի վրա, «հրեշտակաց բնակարան եւ մարդկանց քավարան»: Եկեղեցին երկրի վրա գտնվող միակ սրբագործված, օծված վայրն է, որտեղ Աստված իջնում եւ բնակվում է: Այն դառնում է Աստծո եւ մարդկանց հանդիպման, հաշտության վայր: Եվ այստեղ է հաստատված այն սանդուղքը, որը դեպի երկինք է բարձրանում: Եվ այդ սանդուղքը սբ խաչն է, որի մի ծայրը եկեղեցու մեջ է, իսկ մյուսը՝ երկնքի արքայության, ուրեմն՝ խաչի սանդուղքով մենք բարձրանում ենք երկնքի արքայություն:

Բայց Աստծո տաճար է նաեւ յուրաքանչյուր քրիստոնյա, մարդ, ով սբ Մկրտության ավագանի մեջ լվացվելով, մյուսն ունի դրոշմով եւ Քրիստոսի Մարմնի եւ Արյան հաղորդությամբ՝ դառնում է Սուրբ Հոգու տաճար, ինչպես սբ Պողոս առաքյալն է ասում, որ «երբ մկրտվում ենք, Քրիստոսով ենք զգեստավորվում», սբ Հաղորդությամբ Քրիստոսն է մեր մեջ բնակվում, այսինքն՝ մենք ներքնապես եւ արտաքնապես դառնում ենք Քրիստոս, այդ պատճառով ենք կոչվում քրիստոնյա, որը նշանակում է՝ «Քրիստոս ի նա», այսինքն՝ Քրիստոսի մեջ է նա, Քրիստոսին է նա: Ուրեմն սբ Մկրտությամբ, Դրոշմի խորհրդով Սուրբ Հոգին է բնակվում մեր մեջ անխախտելի, անքակտելի կնիքով: Հիշենք Տիրոջ պատմած թախմորի առակը. «Երկնքի արքայությունը նման է թախմորի, որ մի կին, առնելով, դրեց երեք չափ ալյուրի մեջ, մինչեւ որ ամողջը խմորվեց» (Մատթ. ԺԳ 33): Երեք չափ ալյուրը խորհրդանշում է մեր միտքը, հո-

գին եւ մարմինը: Մեր ողջ կյանքի ընթացքում Սուրբ Հոգու շնորհը, իբրեւ թախմոր, խմորում, աստվածացնում է մեր միտքը, հոգին եւ մարմինը: Բայց պետք է ջանանք եւ աշխատենք, որ այդ շնորհը գործի մեր մեջ, այսինքն՝ պահենք պատվիրանները, աղոթենք, բարին գործենք, որպեսզի Սուրբ Հոգու շնորհը մեր մեջ լիառատ կերպով գործի եւ խմորի մեր միտքը, հոգին եւ մարմինը՝ դարձնելով մեզ աստվածային, որովհետեւ Աստված մարդացավ, որպեսզի մարդն աստվածանա:

- Հայր սուրբ, առաքյալն ասում է, որ «Եթե մեկն Աստծո տաճարն ապականի, Աստված էլ նրան պիտի ապականի, որովհետեւ սուրբ է Աստծո տաճարը, որը դուք եք»: Եթե մարդը, իր կյանքի ընթացքում տարատեսակ մեղքեր գործելով, ապականում է իր տաճար-մարմինը, Սուրբ Հոգին կարող է հեռանա՞լ նրանից:

- Սուրբ Հոգին նմանվում է հետեւյալին. ենթադրենք վերցնում ենք մի մաքուր անոթ, բաժակ եւ լցնում այն անուշահոտ յուղով: Սա խորհրդանշում է մեր մկրտությունը, որովհետեւ նախ ջրով ենք մկրտվում, մաքրվում աղամական եւ ներգործական մեղքերից, ապա Դրոշմի խորհրդով Սուրբ Հոգին իջնում եւ բնակվում է մեր մեջ: Սակայն հետագայում, երբ մաքուր չենք պահում մեր հոգու անոթը, այլ անուշահոտ յուղի վրա լցնում ենք ամեն տեսակի աղտեղի նյութեր՝ փոքր եւ ծանրագույն մեղքեր, այլեւ անուշահոտ յուղի հոտը չի գալիս. թեեւ այն մնում է իր տեղում, սակայն արդեն մեղքերի հոտն է զգալի լինում: Ուրեմն՝ Սուրբ Հոգու շնորհը մեր հոգու խորքում, իբրեւ անխախտելի դրոշմ, մնում է, միշտ վառվում է, ինչպես մշտավառ կանթեղ, եւ երբ մենք մաքրենք մեր սիրտն ու հոգին ամեն տեսակի մեղքերից, Սուրբ Հոգու շնորհը կրկին կսկսի գործել մեր մեջ, բուրել, ինչպես անուշահոտ յուղ:

- Հայր սուրբ, հիշյալ հատվածում առաքյալն ասում է. «Դուք ձեր տերը չեք, քանզի մեծ գնով գնվեցիք: Փառավորեցեք Աստծուն ձեր մարմինների մեջ» (Ա Կորնթ. Զ 19-20): Ինչպե՞ս հասկանալ առաքյալի խոսքը:

- Նախ պետք է հասկանանք, որ «մեծ



գնով», այսինքն՝ Քրիստոսի պատվական արյամբ գնվեցինք: Քրիստոսը խաչի գոհաբերությամբ ամբողջապես զոհաբերվեց, իր արյունը տվեց մեզ համար, ուրեմն մենք այլեւս մեզ չենք պատկանում, մենք Քրիստոսի ծառաներն ենք, իսկ ծառան երբեք իր կամքը չի փնտրում, այլ կատարում է իր տիրոջ կամքը: Այդպես էլ մենք պետք է ահ ու դողով պահենք Տիրոջ պատվիրանները, Նրա կամքը կատարենք՝ հոժարությամբ հանձնվելով Նրան: Սբ Գր. Տաթևացին ասում է, որ եթե ողջ տարերքը, տիեզերքը, երկինքն ու երկիրն անգին քար դառնան, Քրիստոսի թափած մեկ կաթիլ արյունից ավելի պատվական չեն դառնա: Ահա այսպիսի պատվական գնով ենք գնված, ուրեմն Տիրոջն ենք պատկանում: Իսկ ինչպե՞ս պետք է «փառավորենք Աստծուն մեր մարմինների մեջ»: Մենք պետք է փառավորենք Աստծուն մեր գործերով, խորհուրդներով: Սբ Գր. Տաթևացին ասում է, որ Աստծու տված ամեն ինչից պարտավոր ենք բաժին հանել. մի՞տք է տվել, ուրեմն մեր մտքի ամենաբարձրագույն թռիչքը, սքանչելի խորհուրդը պիտի նվիրենք Տիրոջը, մեր սրտի ամենաանուր, նվիրական զգացումն ընծայենք Նրան, մեր ձեռքերի բարի գործերով Տիրոջը ծառայենք, մեր ոտքերով եկեղեցի գնանք, մեր շրթունքները մշտապես Տիրոջ անունը պիտի ինչեցնեն, մեր ականջներով Նրա պատվիրանները լսենք ու կատարենք, այսինքն՝ մեր յուրաքանչյուր գործի մեջ պիտի Տիրոջ անունը փառավորվի: Եվ մարդիկ պիտի ճանաչեն մեզ եւ մեր բարի գործերով փառաբանեն Աստծուն՝ ասելով. «Սրանք Աստծու ծառաներն են»:

- Փաստորեն՝ քրիստոնյան պետք է իր կյանքի օրինակով վկայի Աստծուն՝ իր աստվածահաճո ընթացքով եւ կենսակերպով լինելով կենդանի քարոզ:


- Այո՛, նա իր ողջ կյանքով պետք է լինի լույս, որովհետեւ Մկրտության խորհրդով Սուրբ Հոգու շնորհների լույսն է բնակվում նրա մեջ, եւ քրիստոնյա մարդը, ապրելով Տիրոջ պատվիրաններով, ուզի թե՛ չուզի, դառնում է աշխարհի լույսը, որովհետեւ Քրիստոսն ասում է. «Դուք եք աշխարհի լույսը»: Մի անգամ մի սուրբ ճգնավոր իր աշակերտի հետ գնում է քաղաք՝ քարոզելու: Նրանք ողջ օրը շրջում են քաղաքով եւ ոչինչ չեն քարոզում: Եվ երեկոյան վերադառնում են վանք: Աշակերտը մոտենում է ճգնավորին եւ ասում. «Հայր սուրբ, չե՞ որ մենք պետք է քարոզենք քաղաքում, բայց ոչինչ չասացինք»: Ծերն ասում է. «Որդայ՛կ, մեր ներկայությունը քաղաքում արդեն իսկ կենդանի քարոզ էր»: Ուրեմն քրիստոնյան Աստծո լույսի փոխանցողը կարող է դառնալ նույնիսկ լոկ իր ներկայությամբ, հայացքով, անգամ՝ լռությամբ:

- Հայր սուրբ, գիտենք, որ մարդը հոգի եւ մարմին է, հետեւաբար իր ողջ կյանքի ընթացքում մշտապես գտնվում է հոգու եւ մարմնի, այլ կերպ ասած՝ լույսի ու խավարի պայքարի մեջ, քանի որ «մարմինը Հոգու հակառակն է ցանկանում, իսկ Հոգին՝ մարմնի հակառակը (տե՛ս Գաղ. Ե 17): Քրիստոնյա մարդն ինչպե՞ս կարող է պահել հավասարակշռություն այս պայքարում:

- Այստեղ պետք է ճիշտ մոտեցում: Մենք պետք է հասկանանք, որ երկու պայքար ունենք՝ ներքին եւ արտաքին: Արտաքին պայքարն այս աշխարհում եղած ամեն տեսակի փորձություններն են, իսկ ներքին պայքարը մեր խղճի ձայնն է, մեր մեղքերն են, չար սովորությունները, մարմնավոր հակումները եւ այլն: Երբեմն մենք շփոթմունքի մեջ ենք ընկնում. ինչո՞ւ, որովհետեւ չենք զանազանում ներքինն ու արտաքինը: Երբ մեր ներքին պայքարը չենք հաղթահարում եւ այդպես պարտված դուրս ենք գալիս արտաքին պայքար, մարդկանց մեջ, հայտնվում ենք խառնաշփոթում: Զանի դեռ դուրս չենք եկել մեր սենյակից, աղոթքով, սրտի զղջումով մաքրենք մեր սիրտը, ձեռք բերենք իրական խաղաղություն, Քրիստոսի խաղաղությունը, զգանք Սուրբ Հոգու շնորհների լույսը եւ այդ պահին կտեսնենք, որ ոչ մի պատահական բան չկա աշխարհում: Ուրեմն մեր ներքին պայքարը հաղթահարելով՝ հաղթանակ կտանենք նաեւ արտաքին պայքարում:

- Առաքյալն ասում է, որ «ինչ որ մարդս սերմանում է, նույնը եւ կինձի. ով սերմանում է իր մարմնի համար, այդ մարմնից էլ կինձի ապականություն, իսկ ով Հոգու համար է սերմանում, այդ Հոգուց էլ կինձի հավիտենական կյանք» (Գաղ. Զ 8):

Շարունակությունը՝ էջ 8



Սկիզբը՝ էջ 5

Տեսիլքի ետեւից գնացող մարդու մեջ երազներն են արթնանում: Երազներն էլ արթնացնում են սերը: Իսկ սիրո անհասա-

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1960-1980-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

նելիության տառապանքը դառնում է կյանքի օրենք եւ տնօրինում մարդ արարածի բախտը:

Բանաստեղծություններում Դավթյանը հատկապես ուժգնացնում է կարոտի զգացողությունն առ կատարյալն ու անթերին: Բարձրագույն սիրո անհասանելիության մեջ էլ նա որոնում է կյանքի իմաստը («Արարչություն»): Սիրո որոնման ճանապարհին իրենց տեղն ունեն է՛լ կանացի խաղերը, է՛լ կանացի եռությունը չհասկանալու, հետո արդեն ուշացումով հասկանալու տաղանայնությունը, որոնք պարուրված են կորուստի ցավով, է՛լ սպասումը, է՛լ հեռացումը:

Սիրո ապրումը Դավթյանը պատկերում է թե՛ քնարական շնչի գործերում եւ թե՛ պատմողական բնույթի ծավալուն բանաստեղծություններում: Այդպիսի գործերում («Կարմիրն ու սեւը», «Ճանապարհին», «Տարելից», «Մենա-

խոսություն» եւ այլն) զգացական ապրումը դրվում է որոշակի գործողության մեջ՝ դառնալով զգացմունքի պատմություն:

Սերը կարեւոր տեղ ունի նաեւ Վ. Դավթյանի պատմական նյութով գրված պոեմներում («Թոնդրակեցիներ», «Ասք սիրո եւ սրի», «Ծուխ ծխանի», «Ճերմակ ձիավորը»), որոնցում այն դիտվում է իբրեւ պատմության հոգեբանական շարժումը կարգավորող ուժ: Այդ երկերում բանաստեղծի խոսքը հեռանում է անհատական վերապրումի տրամադրություններից եւ ընկնում վիպական-նկարագրական պատմմի մեջ: Առավել բնութագրականը «Ասք սիրո եւ սրի» գործն է, ուր սերը եւ խարդավանքը, սերը եւ փառքի ճանապարհը կողք կողքի վերակերտում են հայոց պատմության չորրորդ դարի դեպքերը՝ ավանդված Մովսես Խորենացու կողմից: Խոսքի ոճական հենքում առատորեն կի-

րառվել են հնագույն ժամանակներից եկող լեզվական, բառապատկերային տարբեր միջոցներ:

Թե՛ այս ասքում, որի մեջ պատմվում է հայոց Արշակ թագավորի եւ Փառանձմի սիրո մասին, թե՛ նշված մյուս երկերում, որոնցում եւս ոգեկոչվում են հնագույն դրվագներ՝ կապված հայոց Արտավազդ արքայի, Կլեոպատրայի ու Անտոնիոսի, ապա Մուշեղ սպարապետի եւ Շապուհի կանանցի հետ, Դավթյանը հասնում է կնոջ արտաքին գեղեցկությունը կերտելու բարձր արվեստին: Նա մեր միջնադարի վարպետների նման (Խայրեններ, Սայաթ-Նովա) խոսքի մեջ մտցնում է մի տեսակ գեղանկարչական հայեցակետ, որը եւ նրան հասցնում է բառային հաջող դրվագումների:

Շարունակելի

Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ԿԻՑ սեմյակում

- Ըստ Եկեղեցու վարդապետների՝ խոհեմությունն առաքինություններից առաջինն է, քանի որ այն զարդարում է մարդու միտքը եւ իմացությունը: Այս առաքինությամբ է, որ մարդը զանազանում է չարը բարուց, կարեւորը՝ անկարեւորից, օգտակարը՝ վնասակարից, սուտը՝ ճշմարիտից... Այս առաքինության շնորհիվ է մարդն ընտրում բարին, ճշմարիտն ու աստվածահաճոն: Խոհեմությունը հաճախ են նույնացնում իմաստության հետ: Հենց սբ Ավետարանի տարբեր խմբագրություններում այս երկու եզրերը երբեմն հաջորդությամբ փոխարինում են միմյանց: Կողոսացիներին ուղղված թղթում, օրինակ, «Հորդոր աղոթքի եւ խոհեմության» դրվագում (տե՛ս Կողոս. Դ 2-9) Պողոս առաքյալը հորդորում է իմաստությամբ վարվել դրսեցիների (իմա՝ օտարների) հետ, որը նույն խոհեմությունն է: «Եվ ձեր խոսքը, - ասում է, - թող միշտ լինի լի Տիրոջ շնորհով, որպեսզի դուք իմանաք, թե ինչպես պետք է պատասխան տաք յուրաքանչյուրին» (Կողոս. Դ 6):

Տե՛ր հայր, ինչո՞ւ է այդքան կարեւորվում խոհեմությունը մարդկային առաքինությունների մեջ:

- Բառի կառուցվածքն արդեն իսկ հուշում է, որ գործ ունենք մտավոր, բանական ոլորտի հետ: Մարդը բանական էակ է: Սա նշանակում է՝ նա իր ճանապարհն անցնում է՝ նախ եւ առաջ առաջնորդվելով բանականությամբ, նույնն է թե՛ խոհեմությամբ: Ուստի մտածողության մեջ խոհեմության բացակայությունը կարող է ծնունդ տալ


ԱՌԱՔԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԽՈՒՆԵՄՈՒԹՅՈՒՆ

Մեր հյուրն է Բյուրավանի Սբ Գրիգոր Լուսավորիչ Եկեղեցու հոգեւոր հովիվ Ղազար ԲՆ. ՊԵՏՐՈՍՅԱՆԸ

բազմաթիվ մեղքերի: Ընդհակառակը՝ խոհեմությամբ գործելով՝ արդարությունն ենք առաջ տանում: Մեկի մասին ասելով՝ «խոհեմ է», նկատի ունենք շրջահայացություն, իմաստություն, հավասարակշռվածություն, հեռատեսություն. այս բոլորի հանրագումարը:

- Իսկ ինչպե՞ս է ձեռք բերվում խոհեմությունը:

- Ցանկացած մարդկային առաքինություն, այդ թվում՝ խոհեմությունը, ձեռք է բերվում ողջ կյանքի ընթացքում եւ առավելապես՝ աստվածաշատության կրթությամբ: Ընթերցելով Աստվածաշունչ մատյանը՝ տեսնում ենք, որ այնտեղ խոսքված են մի կողմից՝ մարդկային կյանքի փորձառությունը, եւ մյուս կողմից՝ աստվածային իմաստության թելադրանքը: Սրանք երկուսը միասնաբար «ձեւավորում» են խոհեմությունը: Ընդ որում՝ հարկ է, որ մարդկային կյանքի փորձառությունը «իր ճիշտ տեղում դրված լինի», այլապես խոհեմության փոխարեն ընդամենը տեղեկացվածություն կունենանք, որն ինքնին ոչինչ է: Այսինքն՝ տեղեկացվածությունը դեռեւս առաքինություն չէ, ոչ էլ՝ պայման առաքինության: Մինչդեռ աստվածաշատությամբ կրթված մեկի մտքում մարդկային կյանքի փորձառությունն իմաստավոր




վում է ճիշտ ուղղությամբ ու առավելագույն չափով, ինչն էլ, ըստ էության, ձեւավորում է խոհեմության առաքինությունը: Օրինակ՝ Առաքյալ գրքում կարդում ենք. «Ով բարիքի փոխարեն չարիք է հատուցում, չարը չի պակասի նրա տնից» (Առ. ԺԷ 13): Սա, թերեւս, Առաքյալ գրքի հեղինակի՝ Սողոմոնի անձնական փորձառության արտահայտությունն է՝ խարսխված իր եւ իր շրջապատի մարդկանց կյանքի փորձի վրա: Բայց այդ փորձառությունը չափազանց կարեւոր է անփորձ մեկի համար, ով ընթերցելով այս տողերը՝ միանգամից կարող է հիմնավոր եզ

րահանգումներ անել կյանքի հսկայական փորձառություն ունեցող մեկի (տվյալ դեպքում՝ Սողոմոն Իմաստունի) խոսքերից, մանավանդ երբ այդ մեկը անհերքելի հեղինակություն է: Մյուս կողմից՝ այն, ինչ ասում է Սողոմոնը (բարու եւ չարի մասին), բազմիցս ասվում, պատգամվում եւ զգուշացվում է Աստվածաշունչ մատյանում՝ Տիրոջ շուրթերով՝ տարբեր առիթներով եւ բազում արտահայտչակերպերի մեջ: Եվ սա՝ ընդամենը մեկ արտահայտություն, մեկ միտք է: Իսկ քանի՞ հազար նման մտքեր կան Սուրբ Գրքում: Եվ, ուրեմն, իմաստության այս երկու աղբյուրներով՝ մարդկային կյանքի փորձառությամբ եւ աստվածային իմաստության թելադրանքով, մարդն օրեցօր աճում է խոհեմության մեջ: Ի դեպ՝ մեր Եկեղեցու սբ վարդապետները միշտ էլ ասել են, որ տգիտությունը սատանայից է, իսկ գիտությունը՝ Աստծուց: Սակայն հատկապես վերջին ժամանակներում անաստվածներն ամեն ինչ անում են՝ մարդկանց համոզելու համար, թե իբրեւ Աստծու Եկեղեցին թշնամի է գիտությանը: Ավելորդ է ասել, որ այս «տեսությունը» կեղծ է եւ սուտ: Ինչպե՞ս կարող էին գիտության թշնամի լինել գիտության լույսը կրողները՝ Եկեղեցու սբ վարդապետները: Մեր համալսարան

ները, կրթության օջախները եւ դեռ եւ Եկեղեցու հովանու ներքո, եւ անգամ վատթարագույն իրավիճակներում (թալան, զրկանք, ասպատակություն) Եկեղեցին զարկ է տվել կրթության գործին: Այդ մարդիկ լիովին լցված են եղել Սուրբ Յոգով: Այլ հարց է, որ աստվածապատկեր մարդու համար եղել է եւ կա մերժելի մի հանգամանք. այն «գիտությունը», որը մարդուն նետում է չարիքի մեջ: Դա գիտություն չէ՝ իր իրական արժեքով, սակայն կարող է ընկալվել իբրեւ գիտություն եւ դրանով իսկ մեծ վնասներ պատճառել մարդկանց: Օրինակ՝ հանրաժանոթ գիտական մի թեզ, որն անգիր գիտեին Նախկին ԽՍՀՄ բոլոր քաղաքացիները: Խոսքս Էվոլյուցիայի դարվինյան հայտնի տեսության մասին է, ըստ որի, իբր, կապիկից մարդ է առաջացել: Ընդունենք, որ սա մի հերթական «գիտական» եզրահանգում է՝ հար եւ նման ժամանակի քննությանը չդիմացած շատ ու շատ գիտական հիպոթեզների: Բայց սրա «իրագործումը» մարդու մտքի եւ հասարակության գիտակցության մեջ ծնում էր բազում վտանգավոր բարոյական հետեւանքներ: Մարդը կամա թե ակամա մտածում էր, որ իր պապերը (ի՛նչ կարելու է՝ քանի սերունդ առաջ) կապիկներ են եղել: Սա ինքնին բարոյական անկման ու հոգեկան ցնցման պատճառ կարող է դառնալ, եթե մարդը փորձի լրջորեն վերաբերվել այդ «տեսությանը»: Աստվածանման եակը՝ մարդը... կապիկի՞ նման: Ի՛նչ է ստացվում. իբրեւ գիտություն էր, բայց այդ «գիտությունը» մարդուն բարոյական անկման տարավ...

Շարունակությունը՝ էջ 8



Սկիզբը՝ էջ 5

Այս պատմական ճշմարտության մասին է գրել ամերիկահայ գրող Փիթեր Բալաքյանն իր «Ճակատագրի սեւ շունը» վեպում (տե՛ս P. Balakian, Black Dog of Fate, New York, 1997, էջ 153), ինչը հաստատվում է պատմական հետազոտություններում (տե՛ս M. Գ. Нерсисян Геноцид армян в Османской Империи, Ереван, 1982, ст. XV, Զ. Կիրակոսյան, Երիտթուրքերը պատմության դատարանի առաջ, հ. 1, Երեւան, 1982, էջ 17-20):

Հայոց ցեղասպանության դրդապատճառների վերաբերյալ առավել սպառնալից տեղեկություններ է հաղորդում Փիթեր Բալաքյանն իր «Ճակատագրի սեւ շունը» վեպում: Վերջինիս պատմական գլուխներից մեկում ամերիկահայ գրողը ներկայացնում է ԱՄՆ-ի դեսպան Հենրի Մորգեն

Հայոց ցեղասպանության դրդապատճառների լուսաբանումը ամերիկյան գրականության մեջ

թաուի ու Թուրքիայի արտգործ նախարար Թալեթ փաշայի առանձնագրույցը, որից պարզ է դառնում, որ երիտթուրքերը մտադրված էին բնաջնջել ոչ միայն հայերին, այլեւ երկրի մյուս բոլոր ազգային փոքրամասնություններին: «Թուրքիան թուրքերի համար», - ասում էր Թալեթ փաշան (տե՛ս P. Balakian, նույն տեղում, էջ 153): Ներկայացված ծրագրի գաղափարական հիմքը Պանթուրքիզմի (համաթուրքականության) տեսությունն էր, որը եւ դարձել էր երիտթուրքերի հանցավոր գործունեության հենքը: Սակայն անհասկանալի է մնում մեկ հարց. եթե երիտթուրքերը ծրագրել էին ոչնչացնել Թուրքիայի տարածքում ապրող բոլոր ազգային փոքրամասնություններին, ապա ինչո՞ւ առաջին զոհը դարձան հենց հայերը եւ ոչ թե որեւէ այլ ժողովուրդ: Բանն այն է, որ այդ ժամանակաշրջանի միջազգային քաղաքական ասպարեզում հաճախ շրջանառվում էր հենց հայկական հարցը, եւ ոչ թե՛ հունական կամ հրեական հարցերը: Հետեւաբար, թուրքերին անհրաժեշտ էր նախ եւ առաջ ազատվել հայերից եւ հետո նոր մյուս ազգային փոքրամասնություններից:

Ի դեպ նշենք, որ համիդյան ջարդերի եւ Մեծ եղեռնի գաղափարական հենքերը եւ պատ

ճառները որոշակիորեն տարբեր էին: Ըստ Էլչին Գրոսբլոուսի «Արարատ» վեպի եւ Չաբել Աբդալյանի «Լույսը մարեց» պոեմի՝ կրոնական գործոնը հանդիսացել է համիդյան ջարդերի հիմնական պատճառը (տե՛ս E. Groseclose, նույն տեղում, էջ 11, Z. Abdalian, The Flame is Blown, New York, 1952, էջ 33, 36): Եվ իրոք, պատմաբանները հավաստում են, որ 1894-96 թթ. կոտորածների գաղափարական հիմքը Պանիսլամիզմի (համաիսլամացման) ծրագիրն էր, համաձայն որի՝ Թուրքական կայսրությունում ապրող ոչ իսլամադավան քաղաքացիները կամ պետք է բնաջնջվեին, կամ էլ իսլամ ընդունեին (տե՛ս Հայկական հարց հանրագիտարան, Երեւան, 1996, էջ 375-376): Իսկապես, եթե որեւէ հայ կամ այլ ազգի պատկանող անձնավորություն իրաժարվում էր իր հավատից, ապա նա հնարավորություն էր ստանում փրկել իր ֆիզիկական գոյությունը: Երիտթուրքերի իշխանության տարիներին իրավիճակը որոշակիորեն փոխվել էր: Երիտթուրքերը շեշտը դնում էին ոչ այնքան Պանիսլամիզմի, որքան Պանթուրքիզմի վրա: Սրա ապացույցն այն է, որ երիտթուրքերը հայերին, հույներին, հրեաներին կոտորելուց հետո ծրագրել էին ոչնչացնել նաեւ արաբների ու քրդերին, որոնք, ինչ


պես հայտնի է, թուրքերի պես իսլամադավան են: Իհարկե, ինչպես սուլթան Աբդուլ Համիդի գահակալության ժամանակ, այնպես էլ երիտթուրքերի իշխանության օրոք փրկության մի փոքր հույս կար. այն էր՝ հրաժարումը ոչ միայն հարազատ կրոնից, այլեւ հրաժարումը սեփական ազգից, նրա բարքերից ու սովորույթներից, ազգային արժեհամակարգից ու մշակույթից: Բայց քանի որ թուրքական վերնախավը լավ հասկանում էր, որ հասուն մարդկանց դժվար էր թուրքացնել, ապա այդ հնարավորությունը հիմնականում տրվում էր մանկահասակ երեխաներին, որոնց մեջ կրոնական եւ ազգային գիտակցությունը դեռեւս ձեւավորված չէր:

Այսպիսով կարելի է եզրակացնել, որ հայոց ցեղասպանության հիմնական դրդապատճառը կրոնական եւ ազգային էր, չնայած քաղաքական գործոնի դերը եւս շատ մեծ էր: Եթե հայոց եղեռնի պատճառը զուտ ազգային եւ կրոնական լիներ, ապա թուրքերը հայերին կբնաջնջեին շատ ավելի վաղ ու բնավ չէին սպասի մինչեւ 1894-96 թթ. եւ 1915 թ.: Նշված ժամանակահատվածում քաղաքական իրավիճակը զգալիորեն փոխվել էր ի վնաս Թուրքիայի, ինչը դրդեց թուրքական վերնախավին՝ նոր, արմատական լուծումներ գտ

նելու: Չմոռանանք նաեւ այն կարեւոր իրողությունը, որ գերտերությունները ժամանակ առ ժամանակ բարձրացնում էին հայկական հարցը: Նրանք առաջ էին քաշում հայերի իրավունքների ու նրանց ինքնավարության հարցը՝ Թուրքիային ընդամենը շանտաժել լեյթակցելու եւ այն կառավարելի դարձնելու նպատակով, բայց բնավ ոչ մարդասիրական նկատառումներով: Իսկ ի՛նչ էր մնում անել երիտթուրքերին՝ գերտերությունների շանտաժից ազատվելու համար. ոչնչացնել հայ ազգին եւ այս եղանակով մեկընդմիշտ լուծել հայկական հարցը: Ասվածից կարելի է պարզ, տրամաբանական եզրակացություն անել. հայ ժողովուրդը դարձել էր գերտերությունների, հատկապես Գերմանիայի քաղաքական խարդավանքների զոհը (տե՛ս V. Dadrian, German Responsibility in the Armenian Genocide. A Review of the Historical Evidence of German Complicity, Cambridge, Blue Crane Books, 1996): Այնուամենայնիվ հայոց եղեռնի անմիջական պատասխանատուն մնում են երիտթուրքերի հանցավոր վարչակարգը եւ թուրք ժողովրդի այն ստվար զանգվածը, որը տրվել էր իր իսկ վերնախավի սաղորանքին եւ իրագործել հայոց ջարդերը:

Տղարան ՍՄԼՈՒՄՅԱՆ

Բանասիրական գիտ. թեկնածու



Սկիզբը՝ էջ 7

- **Խոհեմություն, իմաստություն...** Երբեմն այս հատկություններն ուղղակի ընկալվում են իբրեւ ճարպկություն: Զե՛ որ խոհեմությունը չարը բարուց, օգտակարը վնասակարից տարբերելու հատկությունն ունի, սակայն տարբեր մարդիկ տարբեր պատկերացում ունեն չարի եւ բարու մասին: Ինչպե՛ս տարբերել...

- Անշուշտ, խոհեմությունը եւ ճարպկությունը նմանության եզրեր ունեն: Զիմնական տարբերությունը, թերեւս, այն է, որ խոհեմությունը գերծ է մեղքից: Խոհեմության բուն բնութագիրն էլ հենց այն է, որ խոհեմ մարդն առաքինագործ մարդն է, մեղքից խուսափող մարդը: Առանց Աստծո երկյուղի, առանց աստվածապաշտության չի կարող լինել խոհեմություն:

- **Ասել է թե՛ անձնական շահ հետապնդող խոհեմությունը դեռեւս առաքինություն չէ՞...**

- Նայած թե ինչ նկատի ունենք՝ անձնական շահ ասելով: Եթե խոհեմության, խելքի, իմաստության շնորհիվ քո անձնական շահն ես առաջ տանում՝ ուրիշներին վնասելու հաշվին, միանշանակ ի չարս գործադրեցիր խոհեմությունը, եւ ուրեմն՝ խոսք անգամ չի կարող լինել առաքինության մասին: Բայց եթե, անձնական շահ ասելով, նկատի ունենք սեփական հոգու փրկությունը, ինչը, բնականաբար, չի էլ կարող իրականանալ ուրիշին վնասելու հաշվին, այս դեպքում արդեն խոհեմությունը ծառայեց իր իսկական նպատակին, իր գլխավոր եւ առաջնային շահին: Եվ այս դեպքում, իհարկե, առաքինություն է:

ԱՌԱՔԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԽՈՎԵՄՈՒԹՅՈՒՆ

- **Տե՛ր հայր, խոհեմության մասին նաեւ ասում են, որ չափավորում ու ներդաշնակում է մյուս բոլոր առաքինությունները: Ինչպե՛ս հասկանալ. առաքինությունները նաեւ չափազանցված են լինում...**

- Պողոս առաքյալը Տիմոթեոսին հորդորում է. «Դու քարոզի՛ր Աստծու խոսքը, շարունակ՝ հայտարարի՛ր այն, ժամանակին լինի թե տարածամ, հանդիմանի՛ր, սաստի՛ր, հորդորի՛ր՝ կատարյալ համբերատարությամբ ուսուցանելով...» (Բ Տիմոթ. Դ 2): Ավետարանի մեկ այլ գրվածքում կարդում ենք. «Մի՛ տվեք սրբությունը շներին. եւ ձեր ամբարքիտները խոզերի առաջ մի՛ գցեք...» (Մատթ. Ե 6): Ավետարանական այս երկու դրվագների թվացյալ հակասությունը հասկանալու, զանազանելու եւ «չափավորելու» համար հենց խոհեմություն է պետք: Մի կողմից՝ Աստծու խոսքը քարոզելու հորդոր՝ առանց տեղի, ժամանակի ու միջավայրի խտրության, մյուս կողմից՝ նույն Աստծու խոսքը (սրբությունը, մարգարիտները) գգուշությամբ գործածելու պատգամ: Իհարկե չափազանց դժվար գործ է՝ խոսել «տեղին» եւ լռել «տեղիկ»: Ցավոք, քիչ չեն դեպքերը, երբ մենք ստիպված ենք լինում ընտրել չարաց փոքրագույնը: Եվ այստեղ նույնպես մեզ հաճախ փրկում է խոհեմությունը՝ օգնելով հնարավորինս ճիշտ կողմնորոշվել:

- **Պողոս Ադրիանուպոլսեցի պատրիարքը շատ հետաքրքիր տեսակետ է առաջարկում, որի հետ անհնար է չհամաձայնել: Ասում է. «Միամտությունն առանց խորագիտության հիմարություն է, եւ խորագիտությունն առանց միամտության՝ խորամանկություն»: Եվ շարունակում է. «Այս երկուսը միասին հենց խոհեմությունն է»: Այնուամենայնիվ, միամտության մասին...**

- Ինչ վերաբերում է միամտությանը, ապա միանշանակ Տիրոջ խոսքը «Աստծո՝ դեմ միամտության» մասին է: Սա նման է այն միամտությանը, երբ որ զավակն իր ծնողի ծնող լինել-չլինելը չի քննում, ճիշտ այնպես, ինչպես հավատացյալ քրիստոնյան Զրիստոսի անձին վերաբերող շատ ու շատ հանգամանքների մեջ չի խորանում՝ «ճշտելու» այս կամ այն «արտառոց» երեւույթը: Իսկ երկրավոր իրողությունների հանդեպ միամտությունը ոչ միայն անօգուտ է, այլեւ խիստ վտանգավոր: Նման միամտության «շնորհիվ» է, որ այ-

սոր շատ ու շատ մարդիկ խաբվելով ընկնում են աղանդավորների ցանցը: Խնդրեմ. միամտություն՝ առանց խորագիտության...

- **Սուրբ Գիրքը գգուշացնում է. «Փորձեցե՛ք ամեն ինչ, բարին ամո՛ւր պահեցե՛ք» (Ա Թեսաղ. Ե 21): Այսինքն՝ ամեն դեպքում պետք է շատ զգո՛ւյշ լինել:**

- Զրիստոսն Ինքն ասաց. «Զգո՛ւյշ կացե՛ք, չխաբվե՛ք. որովհետեւ շատերը պիտի գան Իմ անունով եւ պիտի ասեն թե՛ ես եմ Զրիստոսը, եւ թե՛ ժամանակը մոտեցավ. նրանց ետեւից չգնա՛ք» (Ղուկ. ԻԱ 8): Զրիստոսը՝ հավատքի Զարոգիչը, Ով հարածամ պահանջում էր հավատք, այս դեպքում՝ կեղծիքի՝ դեպքում, ասում է՝ չխաբվե՛ք, չհավատա՛ք... Նույն էլ Սբ Եկեղեցին է անում: Մկրտվողին նախ հրաժարվել է տալիս սատանայից, Նոր միայն մկրտում: Այսինքն՝ մերժել, հրաժարվել, չընդունել, չհավատալ սատանայի որեւէ խաբկանքի եւ չարից իսպառ հրաժարված ու մաքրված՝ ապավինել Աստծուն:

- **Սիրացի Իմաստության գրքում այսպիսի տողեր կան. «Փառքն ու անարգանքը խոսքի մեջ են, եւ մարդու կործանումը՝ իր լեզվի վրա» (Սիրաց Ե 15): Որքանո՞վ է կարեւոր խոհեմությունը՝ խոսքի մեջ:**

- Կարելի է ասել՝ չափազանց: Ինչո՞ւ: Խոսքից կարող են առաքինություններ ծնվել, կարող են եւ՝ պղծություններ: Լեզվի (իմա՝ խոսքի) անսահման հնարավորությունները լավագույնս ու համապարփակ ներկայացնում է սբ Զակարյոս առաքյալն իր Ընդհանրական թղթում՝ «Ընդդեմ անսանձ լեզվի» խորագրի ներքո (տե՛ս Զակ. Գ 1-12): Իսկապես ահռելի է լեզվի, այսինքն՝ խոսքի միջոցով իրականացվող դաշտը: Երկրի վրա ամբողջ իշխանությունները ձեռավորվում են խոսքի հիմքի վրա, մարդկային փոխհարաբերություններ եւ միջպետական հարաբերություններ զարգանում ու անկում են ապրում խոսքի շնորհիվ ու պատճառով: Դետեաբար՝ խոսքի դաշտի մեջ չափազանց կարեւոր է խոհեմության գործոնը: Ընդ որում՝ սա փոխադրական իրավիճակ է. եթե մարդու ներքնաշխարհում առկա է խոհեմությունը, այն անպայման կարտահայտվի: Խոսեցրե՛ք մարդկանց եւ շատ արագ պատկերացում կկազմեք նրանց մասին: Որովհետեւ խոսքի դաշտը ոչ միայն չափազանց ընդգրկուն է, այլեւ չափազանց «խոսուն»: Եթե մեկը կարողանում է խո-

սել, ասեցը, կես ժամ եւ չի սխալվում, առավել եւս՝ հիմարություններ չի ասում, դա արդեն նվաճում է, մանավանդ մերօրյա իրականության համար: Իսկ ահա թե ինչ է ասում Զակարյոս առաքյալը. «Եթե մեկը խոսքով չի մեղանչում, նա կատարյալ մարդ է՝ ընդունակ սանձահարելու իր ամբողջ մարմինը» (Զակ. Գ 2): Անշուշտ, «խոսքով չմեղանչելու» համար հարկ է, որ մտքով, խորհուրդներով ու գործերով էլ մաքուր լինես: Մյուս կողմից՝ առաքյալը հավանաբար նկատի ունի նաեւ խոսքի մեջ խոհեմության դրսեւորման կարեւոր հանգամանքներից մեկը, որն անսխալ խոսելու արվեստն է կամ ճարտարախոսությունը, ինչը, թերեւս, ամենաբարդն է բոլոր արվեստներից:

- **Տե՛ր հայր, որեւէ մարդ անսխալական չէ եւ որքան էլ շրջահայաց, խելացի լինի, դարձյալ կարող է սխալվել: Մարդ ո՞ւմ հետ պետք է խորհրդակցի, որպեսզի չսխալվի...**

- Խորհրդակցելու հանգամանքը եկեղեցում շատ վաղուց հստակեցված ու հաստատված է: Դա խոստովանահոր «ինստիտուտն» է: Զավատացյալ մարդն իր նեղությունը, խնդիրը, մեղքը, տագնապները պատահական մարդկանց առջեւ «շաղ տալու» եւ անիմաստ ու պատահական ազդեցություններ կրելու փոխարեն, հարկ է, որ հոգեւորականի հետ կապ պահի եւ հատկապես այն հոգեւորականի, ում ինքը վստահում է: Որովհետեւ, եթե չվստահեց, խոստովանության մասին խոսք անգամ լինել չի կարող: Ուրեմն՝ միայն բացարձակ վստահության պարագայում իմաստ ունի խոստովանահոր հանգամանքը: Զե՛ որ նպատակն աստվածային առաջնորդություն ստանալն է, ինչը կախված է բացարձակ անկեղծ ներկայացված խոստովանությունից: Իհարկե, մարդը կարող է նաեւ մարդկանցից խրատներ ու առաջնորդություն ստանալ: Սակայն Աստծո խոսքն ասում է. «Երբ կույրն է առաջնորդում կույրին, սխալվում է, եւ երկուսն էլ փոսն են ընկնում» (Մատթ. ԺԵ 14):

- **Տե՛ր հայր, թեմայի վերաբերյալ Ձեր օրինության մաղթանքն եմ ակնկալում՝ ուղղված մեր ժողովրդի հավատավոր զավակներին:**

- Աստված թող օրհնի մեր ժողովրդի բոլոր զավակներին, նրանց օձերի պես խորագետ դարձնի եւ աղավիհների նման միամիտ: Խորագետ՝ չարի որոգայթներից պաշտպանվելու եւ բարին հաստատելու համար, եւ միամիտ՝ տիեզերքի Արարչի ու Խնամողի առաջ մանկական «անփույթ» ու անմեղ միամտությամբ...

Յուրընկալեց Զայկ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԸ

ՎՈՎԻՎՆ ՈՒ ՆՐՎ ՂՈՏԸ


Սկիզբը՝ էջ 6

- Սքանչելի՛ խոսքեր է ասում առաքյալը: Սբ Գր. Տաթևացին, կարծեք, մեկնաբանում է այս խոսքերը՝ ասելով. «Ո՞վ է մեր բարեկամը, ընկերը. Զրիստոսն է մեր բարեկամը, մենք պետք է Նրան սիրենք, բայց իրականում սիրում ենք աշխարհը, մարմինը, սատանային, քանի որ մեղքեր ենք գործում: Իսկ նրանք ի՞նչ կարող են մեզ տալ՝ միայն ապերախտություն, չարիք, հոգու ցավ, խղճի խայթ, տանջանք, իսկ վերջում՝ հավիտենական տանջանքներ գեհեկի կրակում: Մինչդեռ Զրիստոսը մեզ տալիս է կյանք, ուրախություն, հոգու խաղաղություն, թեթեւացում մեղքերից, երկնքի արքայություն, երջանկություն, երանություն»: Այսինքն՝ ով մարմնի համար է սերմանում, մարմնի հետ էլ հավիտենական տառապանք եւ ապականություն կժառանգի, իսկ ով հոգու համար է սերմանում, հավիտենական կյանքը կժառանգի՝ մշտապես Տիրոջ ներկայությունը վայելելով:

- **Հա՛յր սուրբ, թերեւս մեկ կարեւոր հանգամանք էլ նշենք**

այստեղ. այն, որ հավիտենության հույսն ունեցող բարեպաշտ մարդն արդեն իսկ այս երկրի վրա իր ժամանակավոր կյանքի ընթացքում է վայելում խաղաղություն՝ Աստծով, խղճի հանգստություն: Զե՛ որ սա եւս պակաս կարեւոր չէ:

- Այո՛, սերն անցատոմսն է երկնքի արքայության. ով ուզում է երկնքի արքայություն մտնել, պետք է Աստծո սերը վայելի արդեն իսկ այս աշխարհում, որն էլ նրան կառաջնորդի երկնքի արքայություն: Պողոս առաքյալն ասում է, որ «մնում են հավատ, հույս, սեր. սրանք՝ երեքը. եւ սրանցից մեծագույնը սերն է» (Ա Կորնթ. ԺԳ 13): Ըստ սբ Գր. Տաթևացու՝ աստվածային այս երեք առաքինությունները մարդը ձեռք է բերում այս աշխարհում, նախ՝ հավատքով բացվում է երկնքի արքայության դուռը մարդու առաջ, եւ եթե մարդը հավատում է աներեւույթ աշխարհներին, հրեշտակների դասերին, Սուրբ Երրորդությանը, ապա նաեւ հույս է տածում, որ Աստված իրեն կփոխհատուցի երկնային արքայության մեջ: Ապա հույսն ա-



վելանում է, ավելանում է նաեւ սերն Աստծո հանդեպ, Ով այսքան՝ բարիքներ գործեց մեզ համար: Եվ մեծագույնը սերն է, որովհետեւ, երբ այս աշխարհից հեռանանք, հավատքը կվերանա, քանի որ այն, ինչն առանց տեսնելու էինք ակնկալում, այլեւս բացահայտ, հոգու աչքերով կտեսնենք, հավատալու կարիք այլեւս չի լինի: Կմնա դեռեւս հույսը, քանի որ մեր վարձը դեռ ստացած չենք լինի. հատուցումը կլինի Տիրոջ երկրորդ գալուստից հետո, երբ արդարները կարժանանան երկնքի արքայության ուրախություններին, իսկ մեղավորները

կդատապարտվեն հավիտենական գեհեկի կրակին: Ուրեմն՝ մահվանից հետո կմնան հույսը եւ սերը, իսկ Զրիստոսի երկրորդ գալուստից եւ աշխարհի վախճանից հետո կվերանան հավատն ու հույսը, քանի որ մեր ակնկալածն Աստված կփոխհատուցի հայտնապես, կմնա միայն սերը:

- **Հա՛յր սուրբ, ո՞րն է թեմայի վերաբերյալ ձեր պատգամը մեր ընթերցողներին:**

- Հիշենք, որ մենք կենդանի Աստծո տաճար ենք, եւ Զրիստոսն է մեր մեջ բնակվում: Սրբությամբ պահենք այդ տաճարը: Մեր հոգու խոր անկյունում

մշտապես ծնկի եկած աղոթենք Աստծո այս տաճարում եւ Տիրոջ ներկայությունը կզգանք, Նրա շնորհը մեր մեջ միշտ վառ կմնա: Խնդրենք, որ Տերը մշտավառ պահի Սուրբ Զոգու շնորհների մեր կանթեղը, ինչը կօգնի մեզ ապրել եւ գործակից լինել Սուրբ Զոգու շնորհներին: Այդպես Սուրբ Զոգին կսրբագործի մեր միտքը, հոգին եւ մարմինը՝ դարձնելով մեզ կենդանի Աստծո տաճարներ:

ԵՐԻՍՏՈՆՅԱ ՋԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

Հիմնադիր՝

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ՝

«Զրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝

Աստղիկ Ստամբուլյան

Գրանցման վկայական՝ 624

Խմբագրության հասցեն՝

Մայր Աթոռ Սբ Էջմիածին

Հեռախոս՝ 517197

Էլ. փոստ՝ qh@etchmiadzin.am

web կայք՝

kh-tert.livejournal.com

krishayas.wordpress.com

Ստոր. տպագր.

4.4.2013 թ.

Տպագրանակ՝ 2100

Գինը՝ 50 դրամ